


Ե ՊՈՒԿՈՎԱՐ

ԲԺԻՇԿ ԱՅԲՈԼԻՏԸ



891. 715
9-88

1958

891.71.15

30 MAY 2011

9-88

ԿՈՐՆԵՅ ԶՈՒԿՈՎՍԿԻ

ԲԺԻՃԱ ԱՅԲՈԼԻՏԸ

ՀԱՅ ԳՅՈՒԵ ԼՈՖԻՏԻՆԳԻ



(Նկարները ՅԵ. ՍԱՖՈՆՈՎԱՅԻ)
Թարգմ. ՄԿՐՏԻՉ ԿՈՂՅՈՒՆ

ՀՀ ՀՀ ՀՀ ՀՀ


ՊԵՏՐԱՍ
ՀՀԿՑԵՄ ԿԿ ԿԻՑ ՄԱՆԿԱՊԱՍՆԵԿԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԲԱԺԻՆ
ՅԵՐԵՎԱՆ
1988

17 JUL 2013


4618

ԱՌԱՋԻՆ ՊԱՏՄՎԱԾՔ

ՃԱՆԱՊԱՐՀՈՂՈՒԹՅՈՒՆ ԿԱՊԻԿՆԵՐԻ ՑԵՐԿՐՈՒՄ



59823-66



ՁԱՆԳԱՀԱՐԵՑԵՔ



Խաչոր և աքանական
և շաքարաբեր դաստիարակութեան

ԶՈՒԾԵԼ



1

ԲԺԻՇԿԸ ՅԵՎ ՆՐԱ ԳԱԶԱՆՆԵՐԸ

Մի բարի բժիշկ կար Ալբոլիտ անունով։ Նա մի չար քուլը ուներ, անունը՝ Վառվառա։ Աշխարհում ամեն ինչից շատ բժիշկը գաղաններին եր սիրում։ Նրա զզրոցում նապաստակներ ելին ապրում, իսկ պահանջանում ապրում եր սկզբուազ։ Բազմոցի վրա փշոտ վողանին եր աեղավորվել, իսկ սնդուկում սպիտակ մկներ ելին ապրում։ Հենց այստեղ, սենյակում ծեր ձին եր կանդնած, իսկ նրա կողքին կովու։

Սակայն իր գաղաններից ամենից շատ բժիշկ Ալբոլիտը սիրում եր բաղիկ նիկային, շանը — Ավազին, Առղուկ-մողուկին, Թութակ — Կարուղուին և Բումբա-բուցին։


Բժշկի չար քուլը՝ Վառվառան շատ եր բարկանում բժշկի վրա՝ սենյակում ալդքան գաղաններ պահելու համար։

— Հենց այս բոպելին դուրս քշիր բոլորին, — բդավում եր նա նրանք սիայն սենյակն են կեղտոտում և ուրիշ վոչինչ, չեմ ցանկանում ապրել այդ գարշելի խոզերի և մկների հետ։


— Վահ, վառվառա, նրանք գարշելի չեն, — ասում եր բժիշկը, —
և յես շատ ուրախ եմ, վոր նրանք ինձ մոտ են ապրում։

Բժիշկ Ալբո-
լիտի մոտ բուժվե-
լու լեկող մարդիկ
վախենում ելին գա-
զաններից։

Մի որ մի կին
լեկավ բժշկի մոտ
և նստեց հենց նույն
բազմոցի վրա, վոր-
տեղ քնած եր ասեղ-
նավոր վոզնին։
Կինը չնկատելով
վոզնուն, նստեց և
ոլոլոլոլ . . . վեր
թռավ ու կպավ
առաստաղին։ Վոզ-
նու սուր ասեղները նրան շատ խիստ ծակոտել ելին։
— Յես ել լերբեք չեմ դա բուժվելու մի ալսալիութ սարսափելի
բժշկի մոտ, — բա-
ցականչեց կինը,
թող նա իր անպի-
տան գազաններին
բուժի։



գազաններին թող ինձ մոտ կդան հիվանդ ընձուղաները, հիվանդ
արջերը, հիվանդ վղերը, յես մեծ սիրով կբուժեմ բոլորին։
Յեր գազաններն սկսեցին այցելել բժիշկ Ալբոլիտին՝ բուժ-



վելու համար։ Ու բժիշկը սովորեց խոսել գազանների լեզվով։ Մի
որ նրա մոտ լեկավ մի ձի և ասաց՝

— Լամա, վոնոր, ֆիֆի, կուկրւ։

Բժիշկն ամիջապես հասկացավ, վոր ձիու լեզվով արդ նշանակում ե.

— Աչքերս ցավում են, խնդրում եմ ինձ ակնոցներ տաք։
Բժիշկը նրան ասաց՝

— Կազուկի, կանուկի։

Զիսու լեզվով արդ նշանակում եր «նստեցեք խնդրեմ»։

Զին նստեց։ Բժիշկը նրան ակնոցներ տվեց և նրա աչքերն
ել չեն ցավում։

Նա սկսեց շատ լավ տեսնել։

— Զակա, ասաց ձին, թափահարեց պոչը և վազեց փողոց։
«Զակա» ձիու լեզվով նշանակում ե «շնորհակալութլուն»։ Բժիշկ
Ալբոլիտից ակնոցներ ստացան բոլոր այն գազանները, վորոնց աշ-
քերը ցավում ելին։

Զիերը, կովերը, կատուները և շներն սկսեցին ակնոցներ
կրել, նույնիսկ ծեր աղոամսերը բնից դուրս չելին թռչում առանց
ակնոցների։


Բուժվելու լեկող գազանների թիվն որեցոր ավելանում եր։
Դալիս ելին ալծեր ու աղվեսներ, կոռուկներ ու չղիկներ։

Բժիշկ Ալբոլիտը բոլորին բուժում եր, բայց վոչ մեկից փող
չեր վերցնում, վորովհետև վարտեղից և ինչ փող պիտի լիներ շան,

ազուավի կամ չղջիկի ձու: Շուտով բոլոր անտառներում փակցվեցին այսպիսի հայտարարություններ.



Բացված ե հիվանդանոց
Գաղանների համար.
Գնացեք բուժվելու
Առանց ուշացման:



2

ԿԱՊԻԿ ԶԻԶԻՆ

Մի լեռեկո, լեռը բոլոր գաղանները քնել ելին, մեկը բժշկի դուռը թակեց:

— Ո՞վ ե, — հարցըց բժիշկը:

— Յես եմ, — պատասխանեց մի թուլլ ձայն:
Բժիշկը դուռը բաց արեց:

Մենյակ մտավ մի նիհար և ցեխուա կապիկ. բժիշկը նստեցրեց նրան բազմոցի վրա և հարցըց:


— Ի՞նչդ ե ցավում:

— Վիզս, — պատասխանեց նա, և արտասվեց:

Բժիշկը նոր միայն նկատեց, վոր նրա վզին պարան կար կապված:

— Յես վախել եմ չար շարժանշչիկից, — ասաց կապիկը. Շարժանշչիկը ծեծում եր ինձ, տանջում և իր հետ ամեն տեղ քաշ եր տալիս ինձ՝ պարանը վզիս:

— Բժիշկը վերցրեց մկրատը, կտրեց պարանը և նրա վզին քսեց մի այնպիսի զարմանալի դեղ, վոր հենց նույն րոպեին վիզը դադարեց ցավելուց. Իսկ հետո լողացրեց նրան լողարանում, կերակրեց և ասաց.



— կապիկ, ապրիր ինձ մոտ: — Յես չեմ ուզում, վոր քեզ նորից վիրավորեն:

կապիկը շատ ուրախ եր, բայց յերբ սեղանի մոտ նստած ընկույզներ եր կրծում, ներս ընկավ նրա բարկացած տերը՝ շարժանշիկը:

— Տուր ինձ իմ կապիկը, — գոռաց նա բժշկի վրա:

— Չեմ տա, — ասաց բժիշկը. Ես չեմ ուզում, վոր դու տանչես:

նրան:


Շարմանշիկը բարկացավ, բռնեց Ալբոլիտի կոկորդից և ուզում եր խփել նրան, սակայն բժիշկն ասաց:

— Հեռացիր ալստեղից անմիջապես, իսկ յեթե դու շարունակես հայիոյել ու կովել, իս կկանչեմ իմ Ավվա շանը և նա քեզ այնպես կգզի, վոր չես մոռանա:

Ավվան սենյակ վազեց և ահեղ մոռաց՝ ում... ու...»

շան լեզվով այդ նշանակում եր՝ «կորի ալստեղից, թե չե լիս քեզ կկծեմ»:

Շարմանշիկը վախեցավ և փախավ: Կապիկը մնաց բժշկի մոտ. գաղանները սիրեցին նրան և Զիչի անվանեցին՝ գաղանների լեզվով «Զիչի» «Քաջ» և նշանակում:





3

ԿՈՎՈՐԴԻԼՈՍԸ

Այն քաղաքում,ուր բժիշկն եր ապրում, կրկես կար, իսկ կը ըկեսում ապրում եր կոկորդիլոսը:

Մի անգամ, ինչպես լեզավ, կոկորդիլոսի ատամները ցավեցին և նա լեկավ բժիշկ Ալբոլիտի մոտ՝ բժշկվելու։ Բժիշկը նրան դեղ տվեց և ատամները դադարեցին ցավելուց։

— Այս, ինչ լավ ե ձեզ մոտ, ասաց կոկորդիլոսը, — շուրջը նայելով և հատակը լիգելով։ Ձեզ մոտ վորքան նապաստակներ, թռչուններ և մկներ կան։ Նրանք բոլորն ել այնպես չաղ և համեղ են, թուլ տվեք ինձ ձեզ մոտ մալ ընդմիշտ, իսու չեմ ուզում կը ըկես վերադառնալ։ Այնտեղ ինձ վիրավորում ու ծեծում են։

— Մոտ մեզ մոտ, — ասաց բժիշկը, միայն տես, լեթե դու թեկուզ մի նապաստակ կամ մի ծիտ ուտես, իսու քեզ անմիջապես դուրս կվռնդեմ։

— Լավ, — ասաց կոկորդիլոսը։ Խոսք եմ տալիս ձեզ, բժիշկ, վոր չեմ վնասի վնչ նապաստակներին, վնչ թռչուններին և վնչ ել մկներին։

Կոկորդիլոսը մնաց բժշկի մոտ, նա հանգիստ եր պահում իրեն։ Վոչնչի ձեռք չեր տալիս, պառկում եր մահճակալի տակ և ամբողջ ժամանակ մտածում եր ձագուկների մասին, վորոնք ապրում ելին հեռու, հեռու, տաք Աֆրիկալում։

Բժիշկը սիրեց կոկորդիլոսին և հաճախ զրուցում եր նրա հետ, բայց չար վառվառան տանել չեր կարողանում կոկորդիլոսին և պահանջում եր, վոր վռնդի նրան։

— Տեսնել անգամ չեմ ուզում, — ասում եր վառվառան, նա ինձ համար անտանելի լե, ինչպես մեծ գորար։ Ինչ բանի մոտից վոր անցնում ե, փչացնում ե։ Յերեկ նա կերել ե լուսամուտի գոգն ընկած իմ կանաչ շրջազգեստը։



— Շատ ել լավ ե արել, — ասաց բժիշկը, զգեստը պետք է պահարանում պահել և վոչ թե լուսամուտի գոգը գցել։



— Այդ անտանելի կոկորդիլոսի պատճառով, — շարունակեց վառվառան, մարդիկ վախենում են մեզ մոտ գալ։ Առաջ պատահում եր, քեզ մեծ թվով հիվանդներ ելին ալցելում և ամեն մեկն

Եր հերթին փող եր վճարում, իսկ հիմա վոչ վոք չի դալիս և
մենք նույնիսկ հագուստ գնելու փող չունենք:

-- Ինձ փող պետք չե, — պատասխանեց Ալբոլիտը, — առանց
փողի յել լես ինձ լավ եմ զգում, լես կրուժեմ գաղաններին և
գաղաններն ել կկերակրեն ինձ:



4

ԳԱԶԱՆՆԵՐՆ ԱՇԽԱՏՈՒՄՆ

Վառվառան ճիշտ եր ասում: Բժիշկն առանց փողի մնաց, նա
հացի փող ել չուներ և յերեք որ շարունակ նստել եր քաղցած:
Բժշկի տանն ապրող գաղանները տեսան, վոր նա վոչինչ չու-
նի ուտելու, սկսեցին նրան կերպերել: Բուն, վորին Բումբա ելին
կանչում, և խողը, վորին Խողուկ-մողուկ ելին ասում, բակում
բանջարանոց սարքեցին, Խողուկը զնչով փորում եր հողը, իսկ
Բումբան կարտոֆիլ եր ցանում. կովս ամեն առավոտ և յերեկո
եր կաթով հուրասիրում եր բժշկին, իսկ հալը ձու յեր ածում
նրա համար: Բժշկի ալգում կարմիր վարդեր ելին բացվել: կապիկ
Չիչին ամեն առավոտ նրանցից ծաղկեփնջեր եր պատրաստում և
տանում եր քաղաք ծախելու, վորպեսզի փող ստանա և բժշկի
համար հաց դնի: Յել բոլորն ոգնում ելին կապիկին:

Եունը, վորին Ավվա ելին կանչում, լվանում եր հատակը, իսկ
կտտուն՝ սպիտակեղենները:

Ծիծաղելի եր տեսնել, թե ինչպես շունը հատակն եր լվանում։
Նա իր պոչին եր կապում ավելը և թափահարում եր այս ու
ուն կողմ։

Բժիշկը քաջալերում եր իր գաղաններին—իմ տանը յերբեք
ալսպիսի մաքրութիուն չի լեզել, շնորհակալ եմ ձեզանից, գաղան-
ներ, ձեր աշխատանքի համար։

Գաղանները խմբով պատասխանեցին նրան.

— Կարաբուկի, մարաբուկի, բռւ։


Գաղանների լեզվով այդ նշանակում եր.

— Ինչպես կարող ենք մենք քեզ չծառալել, չե՞ վոր դու մեր
ամենայավ ընկերն ես։

Իսկ շունը—Ավվան լիզում եր նրա ալտերը և ասում։

— Աբուզո, մարուզո, բախ։

Շան լեզվով այդ նշանակում եր «Մենք յերբեք քեզ չենք լքի
և քո հավատարիմ ընկերները կլինենք»։



59823-66

ԾԻԾԵՌՆԱԿԸ

Մի անգամ յերեկոյան Բումբա բունասաց։

— Այնտեղ ինչ վոր մեկը դոկուը ճանկուում ե մկան պես։

Բոլորն ականջ դրեցին, բայց վոչինչ չլսեցին։

— Դուն մոտ, վոչ վոք չկա, — ասաց բժիշկը, — քեզ այդպես

թվաց։

— Վո՞չ չթվաց, — պատասխանեց բուն, — իս լսում եմ, վոք
այնտեղ ուեկը ճանկուում ե։ — Այդ կամ մուկ ե կամ թռչուն։ Յեկ
վերջապես դուք պետք ե ինձ հավատաք, մենք բուերս ավելի լավ
ենք լսում, քան մարդիկ։

Բումբան չեր սիրալվում։ Կապիկը բաց արեց դուռը և շեմքի
վրա մի ծիծեռնակ տեսավ։


— Զնուանը ծիծեռնակի։ Հրաշք ե, չե վոր ծիծեռնակները չեն
դիմանում սառնամանիքին և դեռ ձմեռը չմոտեցած չվում են տաք
Աֆրիկա։ Խեղճ ծիծեռնակ, ինչպես մրսում ե։ Նա նստած ե ձյան
վրա և դողում ե։

— Ծիծեռնակ, — ձախ տվեց բժիշկը, — ներս լեկ սենյակ և
տաքացիր զառարանի մոտ։

Ակզրում ծիծեռնակը վախենում եր ներս մտնել։ Նա տեսավ,

Բժիշկ Այբուլիսը—2





վոր սենյակում նստած ե կոկորդիլոսը և մտածեց, վոր կարող ե իրեն ուտել:

Բայց Զիշին ասաց նրան, վոր կոկորդիլոսը շատ բարի լե, Այն ժամանակ միայն ծիծեռնակը ներս թռավ սենյակ, նստեց աթոռի մեջքին, շուրջը նայեց և ասաց:

— Զիրուտտո կիրաֆու մակ...

Գազանների լեզվով ալդ նշանակում ե օսսացեք խնդրեմ, այստեղ չի ապրում արդյոք նշանավոր բժիշկ Ալբոլիտը, վորը բուժում ե գազաններին:

— Այո, պատասխանեց բժիշկը, Ալբոլիտը լես եմ:

— Մի բան ունեմ ձեզ խնդրելու, — ասաց ծիծեռնակը: Դուք պետք ե հենց հիմա մեկնեք Աֆրիկա, լես Աֆրիկայից լեկել եմ ձեզ հրավիրելու, այնտեղ ապրում են կապիկներ, վորոնք հիմա ծանր հիփանդ են:

— Նրանց ինչն ե ցավում, — հարցրեց բժիշկը:

— Նրանց փորն ե ցավում, — ասաց ծիծեռնակը, — նրանք պառկել են գետնին և արտասվում են: Աշխարհում մի մարդ կա միայն, վոր նրանց կարող ե փրկել. ալդ դուք եք: Վերջըք ձեզ հետ դեղորայք, առանց ուշանալու մեկնենք Աֆրիկա, լեթե չգաք Աֆրիկա, բոլոր կապիկները կմեռնեն:

— Այս, ասաց բժիշկը, — լես մեծ ուրախությամբ կդնալի Աֆրիկա: Յես կապիկներ սիրում եմ և շատ եմ ցավում, վոր նրանք հիփանդ են, բայց լես նավ չունեմ, չե վոր Աֆրիկա գնալու համար հարկավոր ե նավ ունենալ:

— Թշվառ կապիկներ, — ասաց կոկորդիլոսը, լեթե բժիշկն Աֆրիկա չգնա, նրանք բոլորը կմեռնեն, միայն բժիշկ Ալբոլիտը կարող ե բուժել նրանց:

Կոկորդիլոսը լաց լեզավ այնպիսի հորդառատ արտասուքով, վոր հատակի վոա գետ առաջացավ:

Հանկարծ բժիշկ Ալբոլիտը բացականչեց.

— Այնուամենայինիվ Աֆրիկա կդնամ, այնուամենայինիվ լես կրուժեմ հիփանդ կապիկներին: Յես հիշեցի, վոր իմ բարեկամ նաշվաստի Ռոբինզոնը մի հրաշալի նավ ունի: Բժիշկը վերցրեց գըշտարկը և գնաց ուղիղ նավաստի Ռոբինզոնի մոտ:

— Բարե, նավաստի Ռոբինզոն, — ասաց նա: Բարե լեզիր, ուռըինձ քո նավը, լես ուզում եմ Աֆրիկա գնալ, կապիկների Յերկիթը:

— Լավ, ասաց նավաստի Ռոբինզոնը, լես կտամ քեզ իմ նավը: Քիալն տես հա, վոր անպարհան վերադարձնես այն, քանի վոր



Դրանից բացի՝ իս ուրիշ նավ չունեմ:

— Անպայման կվերադարձնեմ, — ասաց բժիշկը, մի անհանգըստանա, ինձ անհրաժեշտ ե միայն Աֆրիկա հասնել:

— Վերցրու, վերցրու, ասաց Ռոբինզոնը, միայն տես, հա, չփշացնես:

— Շատ լավ, չեմ փշացնի, — ասաց բժիշկը և շնորհակալություն հայտնելով նապաստի Ռոբինզոնին, վագեվազ տուն հասավ:

— Գաղաններ, պատրաստվեցնք, — աղաղակեցնա, վաղը մենք մեկնում ենք Աֆրիկա, կապիկների Յերկիրը:

Գաղանները շատ ուրախացան, սկսեցին թռչկոտել սենյակում և ծափահարել թութակ կարուղոն շկչկացրեց և յերգեց:

Գնում եմ, գնում եմ, Աֆրիկա,


Սիրով հուզով լի,

Աֆրիկա, Աֆրիկա,

Սիրուն հայրենիք:

— Յես բոլոր կենդանիներին չեմ վերցնի ինձ հետ Աֆրիկա գնալիս, — ասաց բժիշկ Ալբոլիտը: Զղջիկները և նապաստակները պետք ե մնան տանը, խնամեն իմ պարտեզն ու բանջարանոցը, նրանց հետ կմնա նաև ծեր ձին: Ինձ հետ կվերցնեմ միայն կոկորդիլոսին, կապիկ-Զիշիին և թութակ կարուղուին, վորովհետեւ նրանք բնիկ աֆրիկացի լեն, այնտեղ են ապրում նրանց ծնողները, լեզբալըներն ու քույրերը:

Սրանցից բացի, ինձ հետ կվերցնեմ Ավվալին, Կիկիալին, Բումբալին և Խոզուկ-մողուկին:



6

ԴԵՊԻ ԱՖՐԻԿԱ

Գաղաններն արագ դարսեցին լրերը և ճանապարհ ընկան: Տանը մնացին միայն նապաստակները, չղջիկները և ծերուկ ձին: Մոտենալով ծովափին, գաղանները մի հրաշալի նավ տեսան: Հենց ալդաեղ ել կանգնած եր նավաստի Ռոբինզոնը, վորն ոդնեց նրանց ճամպրուկները և դեղորայքը տեղափոխելու:

Յերբ նրանք բոլորը նավ մտան և ուղում ելին առաջ շարժվել, ճանկարծ բժիշկը բարձր ձախով բղավեց:


— Սպասեցնք, սպասեցնք, խնդրում եմ:

— Ի՞նչ ե պատահել, — հարցրեց կոկորդիլոսը:

— Սպասեցնք, սպասեցնք, — բղավում եր բժիշկը, չե վոր իս չգիտեմ վորտեղ ե գտնվում Աֆրիկան: Պետք ե գնալ հարցնել մեկին:

Կոկորդիլոսը ծիծաղեց:

— Մի գնա: Հանգստացիք: Ծիծեռնակը քեզ ցույց կտա, ինչ ուղղությամբ պետք ե գնալ: Նա հաճախ ե լեզել Աֆրիկարում: Ծիծեռնակները յուրաքանչյուր ձմեռ Աֆրիկա լեն չվում:



— Իհարկե, ասաց ծիծեռնակը: Յես ձեծ սիրով ցուց կտամ ձեզ Աֆրիկակի ճանապարհը: Յեզ նա թուալ նավի առջևով, ցուց տալով ճանապարհը բժիշկ Ալբոլիտին: Նա թոշում եր գեղի Աֆրիկա, իսկ բժիշկ Ալբոլիտը վարում եր նավը նրա հետքերով: Վոր կողմով թոշում եր ծիծեռնակը, այն ուղղութիւնը ել գնում եր նավը:

Վրա հասավ մութ ու ամպամած գիշերը և ել վոչինչ չեր լերելում: Ալլ ժամանակ ծիծեռնակը վառեց փոքրիկ լավտերը, բռնեց իր կացով և շարունակեց թոխքը լապտերի լույսով, այնպես վոր բժիշկը գիշերով ել կարողանում եր տեսնել, թե վոր ուղղութիւնը պետք ե գնար:

Գնացին, գնացին, և հանկարծ տեսնում են, վոր գեղի իրենց մի կոռոնկ ե թոշում:

— Ասացեք խնդրեմ, ձեր նավում չի՞ արդիոք նշանավոր բժիշկ Ալբոլիտը:

— Այո, — պատասխանեց կոկորդիլոսը: Նշանավոր բժիշկ Ալբոլիտը մեր նավումն ե:

— Խնդրեցեք բժշկին, վոր ավելի արագ գնա, — ասաց կոռոնկը.

— Վորովհետեւ կապիկների առողջությունը գնալով վատանում ե: Երանք սպասում են, և հաղիվ թե կենդանի մնան մինչե բժշկի հասնելը:

— Մի անհանգստանաք, — ասաց կոկորդիլոսը: Մենք ոլանում ենք բոլոր առագաստները բաց արած: Կապիկներն այնքան ել լերկար չեն սպասի:

Լսելով այս, կոռոնկն ուրախացավ և խկույն լետ վերադարձավ, վորպեսզի հայտնի կապիկներին, թե բժիշկ Ալբոլիտն արդեն շատ մոտ ե գտնվում: Նամա արագ թոչում եր ալիքների վրայով: Կոկորդիլոսը, վոր նստած եր տախտակամածի վրա, հանկարծ տեսավ, վոր նավին դիմավորում են գեղեցիկ ձկները դելֆինները:

— Ասացեք խնդրեմ — հարցրին դելֆինները, արդյոք ալ նավում չի՞ նշանավոր բժիշկ Ալբոլիտը:

— Այս, նշանավոր բժիշկ Ալբոլիտն այս նավումն ե:


— Բարի լեզեք խնդրել բժշկին, վոր ավելի արագ քշի նավը, վորովհետեւ կապիկների առողջությունը գնալով վատանում ե:


— Մի անհանգստանաք, — պատասխանեց կոկորդիլոսը: Մենք ոլանում ենք բոլոր առագաստները բաց արած: Կապիկներն այնքան ել լերկար չեն սպասի մեզ:

Առավոտական բժիշկը հարցրեց կոկորդիլոսին.

— Ի՞նչ կա այնտեղ, առջեռում: Կարծես թե ցամաք ե լերենում: Յես կարծում եմ, վոր գա Աֆրիկան ե:

— Այս, Աֆրիկան ե, բացականչեց կոկորդիլոսը, Աֆրիկա, Աֆրիկա: Շուտով մենք կլինենք Աֆրիկայում: Յես աեսնում եմ այնտեղ ջալամներ, ոնդեղջուրներ, լես տեսնում եմ ուղտեր:





7

ՓՈԹՈՐԻԿ

Ճանապարհին փոթորիկ բարձրացավ։ Անձրի։ Քամի։ Կալծակ։ Վորոն։

Ալիքներն այնպես ելին ուռչում, մեծանում, վոր սարսափելի լեր նայելը, Յեվ ահա հանկարծ։

— Տրաք-տրաք-տրաք, սարսափելի ցնցում զգացվեց և նավը կողքի թեքվեց։

— Այս ի՞նչ բան ե, ալս ի՞նչ բան ե, հարցը բարձրեց բժիշկը։

— Նավակործաննում, — բղավեց թութակը։ Մեր նավը կպավ ժայռին և փշրվեց։ Մենք խորտակվում ենք, ով կարող է թողարկովի։


— Ախր յես լողալ չգիտեմ, — բղավեց Զիշին։


— Յես ել չգիտեմ, բացականչեց Խոզուկ-մոզուկը, և նրանք դառն արտասվեցին։ Բարեբախտաբար կոկորդիլոսը տեղավորեց նրանց իր լան մեջքի վրա և դեպի ափ լողաց։

— Ուռա ա ա, բոլորը փրկված են, բոլորը բարեհաջող Աֆրիկա հասան, բայց նրանց նավը խորտակվեց։ Անոելի ալիքն իր տակ առավ նավը և փշուր-փշուր արեց։ Ինչպես պիտի նրանք տուն վերագառնան, չե՞ վոր ուրիշ նավ չունեն։

Մթնեց: Բժիշկը և նրա բոլոր գաղանները ցանկանում ելին քնել, նրանք մինչև վոսկորները թրջվել ելին և սարսափելի հոգներ բայց բժիշկը հանգստանալու մասին չեր ել ուզում մտածել։

— Շտապ, շտապ զեպի ափ, շտապ զեպի առաջ, պետք ե հասնել կապիկների Յերկիրը, խեղճ կապիկները հիվանդ են, նրանք սպասում են անհամբեր և հազիր կենդանի մնան մինչև իմ տեղ հասնելը։





8

ԲԺԻՇԿԸ ԴԺԲԱԽՏՈՒԹՅԱՆ ՄԵԶ

Հենց ալդ ժամանակ բժշկին մոտեցավ Բումբան և վախեցած ձախով ասաց.

— Սնւս, սնւս, ինչ կոր մեկը դեպի մեղ ե գալիս: Յես մարդու վոտնաձայներ եմ լսում:

Բոլորը կանդ առան և սկսեցին ականջ դնել:

Հանկարծ անտառից դուրս թռավ մի շար զզզզված ծերունից երկար ալեհներ մորուքով և բղավեց.

— Ի՞նչ եք անում դուք այստեղ: Ո՞վքեր եք և ինչմու իեք յեկել:

— Յես բժիշկ Ալբոլիտն եմ, — ասաց բժիշկը, յես Աֆրիկա յեմ յեկել հիվանդ կապիկներին բուժելու:

— Հա, հա, հա, ծիծաղեց զզզզված ծերունին. — Հիվանդ կապիկներին բուժելու, իսկ գիտե՞ք արդյոք, թե դուք ուր եք ընկել:

— Ո՞ւր ենք ընկել, — հարցրեց բժիշկը:

— Դուք ընկել եք ավաղակ և մարդակեր Բարձալելի լերկիրը:

— Բարձալելի լերկիրը, — բացականչեց բժիշկը:

Ա՛, մենք խեղճերս, ո մենք զժբախտներս: Բարձալելին աշխարհի ամենաչար մարդն ե, և մեզ փրկություն չկա:

— Այն, ասաց զզզզված ծերունին և քահաքան ծիծաղեց: Ավ նրան զերի լե ընկնում, բոլորին ել ուտում ե:

— Յեկեք փախչենք, — ասաց կոկորդիլոսը: Մենք դեռ կարող ենք փրկվել:





Բայց հենց ալդ ժամանակ վրա հասավ ինքը, Բարձալելը և թուրը թափահարելով դուռաց.

— Ել դուք, իմ հավատարիմ ծառաներ, բռնեցեք ալս հիմար բժշկին և նրա հիմար զազմներին և բանտ զցեցեք, վաղը յես նրան կտապակեմ և կուտեմ:

Բարմալելի ծառաները վրա հասան, բռնեցին բժշկին, բռնեցին կոկորդիլոսին, բռնեցին բոլոր զազաններին և բանտում փակեցին: Գաղանները կծում ելին նրանց ձեռքերը, ճանկում ելին, ուղում ելին դուրս թռչել նրանց ձեռքերից, բայց թշնամիները շատ ելին և ուժեղ: Նրանք քաջ տվեցին դժբախտներին դեպի բանտը և բանտարկեցին, իսկ բանտի բանալին հանձնեցին Բարմալելին: Բարմալելը բանալին պահեց իր բարձի տակ:

Բժիշկը շատ տիսրեց: Ել չի հաջողվի նրան բուժել կապիկներին: Խողուկ-մողուկը խոնչաց, իսկ շունը գոռնաց:

— Դժբախտ ենք մենք, դժբախտ, ասաց Զիչին, — այս բանտից վոչ մի կերպ ազատվել չենք կարող, պատերն այնպես ամուր են, իսկ դռները յերկաթիա, այլևս ոենք չենք տեսնի վո՞չ արե, վո՞չ ծաղիկներ, վո՞չ ծառեր: Այս վորքան դժբախտ ենք մենք: Կոկորդիլոսն այնպես արցունք եր թափում, վոր հատակի վրա շուտով լճակ գոյացավ:



9

ԹՈՒԹԱԿ ԿԱՐՈՒԴՈՅԻ ՍԽՐԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆԸ

Գիշերը վրա հասավ, մութը կոխեց, հանկարծ մի ինչ վոր ձայն լսվեց.

— Լաց մի՛ լինեք, իմ սիրելի բարեկամներ. Ես ձեզ այս սարսափելի բանտից կազատեմ:

Բոլորը վեր թռան.

— Այս ով ե, — հարցրեց բժիշկը.

— Ցես եմ, թութակը:

Բժիշկը գաւը ծիծաղեց.

— Վո՞չ, սիրելի կարուղո, ազատվելն անհնարին ե. մենք կորած ենք, բանտի պատերը շինված են կուռ յերկաթից: Միթե դու կարող ես ջարդել այդ դռները. մի հիմարանա: Վաղն առավոտյան մեզ մռա կգա Բարմալելը: Կ մեզ բոլորիս կսպանի, թե՛ ինձ, թե՛ քեզ...


Բայց թութակը համառորեն իրենն եր կրկնում:

— Ինչ ուզում ե լինի, յես ձեզ կփրկեմ այս բանտից:

Ցես բժիշկն ու գազանները քնեցին, թութակը մոտեցավ վանդակի ճաղերին, սեղմակելով, յերկաթե ձողերի տրանքով մի կերպ

դուրս պըծավ վանդակից և թռավ ուղիղ Բարձալելի մոտ: Բարձալելը խորը քնած եր իր մահճակալի վրա, իսկ բարձի տակ գանը-վում եր այն ահոելի բանալին, վորոնցով նա փակել եր բանտի լերկաթյա դոները: Սուսիկ-փուսիկ ներս մտավ թութակը Բարձալելի սենյակը և բարձի տակից կամացուկ դուրս քաշեց բանալին:

—Ո, լեթէ ավազակը հանկարծ արթնանար, տեղն ուտեղը կսպաներ անվախ թութակին: Բայց ավազակը քնած եր շատ խորը քնով,




և թութակն իր ճանկերով ամուր բռնեց բանալին և վորքան վոր ուժ ուներ թռավ գեղի բանտը: Այս, վորքան ծանր եր այն բանալին, թութակը քիչ եւ մնում վայր գցեր ճանապարհին:

Բայց և այնպես հասավ բանտ, ուղիղ թռավ գեղի բժիշկ
Ալբոլիտի լուսամուտը: Բժիշկն ուրախացավ, լերբ տեսավ բանալին:

— Ուռա, մենք փրկված ենք, բացականչեց նա. վախչենք շուտով, քանի գեռ Բարձալելը չի արթնացել: Բժիշկն առավ բանալին, բաց արեց գուռը և դուրս լեկավ: Նրա հետեւից դուրս լեկան նաև բոլոր գազանները:

— Ազատ ենք, ազատ ենք, ուռա... Շնորհակալ ենք, քաջ կարուեգո, — ասաց բժիշկը: Ցեթե դու շինելիր, մենք բոլորս կը-կորչելինք, մեզ հետ միասին կկորչելին նաև հիվանդ ու խեղճ կապիկները:





ԿԱՊԿԵ ԿԱՄՈՒՐՁԻ ՎՐԱՅՈՎ

Յերբ Բարձմալեն իմացավ, վոր բժիշկ Ալբոլիտը Փախել և բանտից, սպատիկ բարկացավ, աչքերը փալատակեցին և վոտքերով դոփեց գետինը:

— Ե՞լ զուք, իմ հավատարիմ ծառաներ, — գոռաց նա, հասեք բժշկի լետեկից, բռնեցեք նրան և այտեղ բերեք:

Ծառաներն անտառը լցվեցին և սկսեցին փորոնել բժիշկ Ալբոլիտին: Ալինիչ հենց այդ ժամանակ բժիշկն իր բոլոր գազանների հետ մոտենում եր Կապիկների Յերկրին: Նա գնում եր շափազանց արագ, Խոզուկ-մոզուկն իր մանրիկ ու թուզ վոտներով չեր կարողանում հասնել նրա հետեւից: Բժիշկը ստիպված գրկեց նրան և ալլպկես շարունակեց ճանապարհը Խոզուկը ծանր երջ բժիշկը սպատիկ հոգնեց:

— Ա՞յս, այնպես կուզենալի հանգստանալ, — ասաց նա, ախ լերանի շուտով հասնենք Կապիկների Յերկիրը:

Չիշին մազլցեց մի բարձր ծառի վրա և բղավեց.

— Յես տեսնում եմ Կապիկների Յերկիրը, Կապիկների Յերկիրը մոտ ե, և մենք շատ շուտով այնտեղ կլինենք:

Բժիշկն ուրախութիւնից ծիծաղեց, նրանք շտապեցին առաջ: Հիվանդ կապիկները, տեսնելով բժշկին, ծափահարեցին:

— Ուսա, մեզ մոտ ե լեկել բժիշկ Ալբոլիտը, բժիշկ Ալբոլիտը մեզ կլափացնի և մենք հենց վաղն արդեն առողջ կլինենք: Հանկարծ անտառի խորքից դուրս թռան Բարձմալելի ծառաներն և սկըսեցին հետապնդել բժշկին:

— Բոնեցեք, բռնեցեք դրան, բղավում ելին նրանք:

Բժիշկն ինչքան ուժ ուներ, փախչում եր: Յեվ ահա, մեկ ել նրանց առջևում մի գետ հայտնվեց: Առաջ վազել հնարավոր չեր, իսկ լողալով անցնել անհնարին եր: Բարձմալելի ծառաներն իսկուն կրոնելին նրան:

— Ա՞յս, լեթե գետի վրա մի կամուրջ լիներ, բժիշկը կանցներ այդ կամրջով և անմիջապես դուրս կգար Կապիկների Յերկիրը:

— Դժբախտ ենք մենք, դժբախտ, — ասաց Խոզուկ-մոզուկը, ինչպես պիտի մենք մլուս ափն անցնենք, ես մի ըռպե, և այդ չար մարդիկ կրոնեն մեզ և նորից մեզ բանտ կնետեն:


Այդ ժամանակ մի կապիկ բղավեց.

— Կամուրջ, կամուրջ, առանց ժամանակ կորցնելու կամուրջ պատրաստեցեք: Կամուրջ: Կամուրջ:

Բժիշկը շուրջը նայեց, կապիկների մոտ վոչ լերկաթ կար, վոչ վայտ: Ինչից պետք է նրանք կամուրջ պատրաստենին:

Բայց կապիկները կամուրջ պատրաստեցին վոչ թե լերկաթից ու քարից, այլ կենդանի կապիկներից: Գետափին ծառեր կալին. Կապիկներից մեկը փաթաթվեց մի ծառի, իսկ մլուս կապիկը կախ ընկավ նրա պոչից: ալսպես բոլոր կապիկները ձգվեցին իրար հետեւից, ինչպես գետի լերկու բարձր ափերի մեջ ընկած մի լերկար շղթա:






— Ահա քեզ կամուրջ, փախիք, — ասացին նրանք բժշկին: Բժիշկը վերցրեց թումբալին և վազեց կապիկների վրայով, իսկ նրա հետեւից վազեցին նրա բոլոր գաղանները:


— Շնուտ, շուտ անցեք, — բղավում ելին կապիկները:

Դժվար եր անցնել կենդանի կապիկներից պատրաստված կամրջի վրայով: Բժիշկը վախենում եր, նրան թվում եր թե վորտեղ վոր ե, ջուրը կընկնի: Բայց վո՞չ. կամուրջն ամուր եր, կապիկները պինդ բռնել ելին միմյանց թաթերից, և բժիշկն իր գաղանների հետ անվտանգ անցավ մյուս ափից: Բարձալելի ծառաները նույնպես ուզեցին անցնել կապիկներից պատրաստված կամրջով և վազեցին բժշկի հետեւից, բայց

հենց կամրջի կեսը հասած չհասած՝ կապիկներից մեկը բայց թողեց ձեռքերը, շղթան կտրվեց և Բարձալելի ծառաները ջուրը թափվեցին:

— Ուռա, բացականչեցին կապիկները, ուռա, բժիշկ Ալբոլիտը փրկված ե: Այժմ նա վոչ վորից չի վախենա: Բարձալելը չկարողացավ բռնել նրան, ուռա...





11

ՀԻՄԱՐ ԳԱԶԱՆՆԵՐԸ

Բժիշկ! Ալբոլիտը հիվանդ կապիկների մոտ շտապեց, նրանք պառկած ելին գետնին և ծանր հառաչում ելին. Նրանք ծանր հիվանդ ելին:

Բժիշկն սկսեց բուժել նրանց. ամեն կապկին պետք եր դեղ տալ, պետք եր սառը կոմպրես դնել: Հիվանդները շատ ելին, իսկ բժիշկը՝ մենակ եր, մենակ մարդու համար դժվար եր արդքանին բուժել: Կիկան, Կոկորդիլոսը, Կարուղոն և Զիչին առանց ուժ խնաելու ողնում ելին նրան, բայց նրանք ել շուտով հոգնեցին, և բժիշկը ուրիշ ոգնականների կարիք զգաց: Նա գնաց անապատ, վորտեղ բնակլում եր առյուծը:

— Բարի լեղեք, ասաց առյուծին, — խնդրում եմ ոգնեք ինձ բուժելու հիվանդ կապիկներին.

Առյուծը մի անեղ հայացք նետեց Ալբոլիտի վրա:

— Իսկ դու գիտե՞ս, թե ով եմ իես. իես առլուծ եմ, գաղանների թագավորը, իսկ դու համարձակվում ես խնդրել ինձ ոգնել քեզ՝ ինչ վոր անպիտն մեյմուններին բուժելու:

Այդ ժամանակ բժիշկը գնաց ոնդեղջլուրի մոտ:

— Ոնդեղջլուր, ոնդեղջլուր, — ասաց նա: Ոգնեցեք ինձ կապիկներին բուժելու: Նրանք շատ են, իսկ իես՝ մենակ, ինձ համար մենակ դժվար ե բոլորին բուժել:

Ոնդեղջլուրները միայն ծիծաղեցին և պատասխանեցին.

— Մենք պետք ե քեզ ոգնենք, գեռ շնորհակալութիւնն հաւտնիր, վոր քեզ պատառ-պատառ չենք անում:

Բժիշկը խիստ բարկացավ չար ոնդեղջլուրների վրա և վազեց հարեան անտառի շերտավոր վագրերի մոտ:

— Վագրեր, վագրեր, ոգնեցեք ինձ բուժեմ կապիկներին:

— Ո՛ո՛ո՛, — պատասխանեցին շերտավոր վագրերը: Հեռացիր քանի դեռ վողջ ես: Ո՛ո՛ո՛..

Բժիշկը տիտոր-տրտում հեռացավ նրանցից:

Բայց շուտով չար գաղանները սաստիկ պատժվեցին: Յերբ հայր առյուծը տուն վերադարձավ, մայր առյուծն ասաց.

— Մեր փոքրիկ կորլունը հիվանդացել ե, ամբողջ որն հառաչում ու արտատվում ե, ինչքան ցավալի լե, վոր նշանավոր բժիշկ Ալբոլիտն Աֆրիկայում չե, նա կրուժեր մեր վորդուն:

— Բժիշկ! Ալբոլիտն այստեղ ե, ասաց հայր առյուծը, լես հենց նոր խոսում ելի նրա հետ:

— Ինչպիսի բախտավորութիւնն, — բացականչեց մայր առյուծը: Վաղիր շտապ և հրավիրիր նրան մեզ մոտ:

— Վհչ, — ասաց հայր առյուծը, լես նրա մոտ չեմ գնա, նա





շի զա մեր վորդուն բուժելու, վորովհետև լես պիրավորեցի նրան։ — Ինչպես թե, դու վիրավորեցիր բժիշկ Ալբոլիտին, ինչ պիտի անենք մենք հիմա. իսկ դու զիտես, վոր բժիշկ Ալբոլիտը ամենանշանավոր բժիշկն ե, նա միակն ե բոլոր մարդկանցից, վոր զիտե խոսել գաղանների հետ՝ գաղանների լեզվով։ Նա միակն է բոլոր մարդկանցից, վոր իմանում ե բուժել վագրերին, կոկորդիլուներին, նապաստակներին, կաղիկներին և գորտերին։ Այս, այս, նույնիսկ գորտերին, վորովհետև նա շատ բարի չե, և ահա ախտիսի մի մարդու վիրավորել ես դու հենց այն ժամանակ, յերբ քո վորդին ծանր հիվանդ ե։ Ի՞նչ պիտի անես հիմա դու։ Առուծը շվարեց։ Զգիտեր ինչ ասեր։

— Վաղիր բժշկի մոտ, — ասաց մայր առյօնը, և ասա, վոր դու ներում ես խնդրում. ոգնիր նրան, ինչով վոր կարող ես, արա, ինչ վոր բժիշկը կասի և խնդրիր նրան, վոր բուժի մեր հիվանդ վորդուն։

Հնար չկար, հայր առյօնը զնաց բժիշկ Ալբոլիտի մոտ։

— Բարե ձեղ, լես յեկել եմ ձեզ ոգնելու, ասաց առյօնը. Իս համաձայն եմ կաղիկներին դեղ տալ և նրանց սառը կոմպրեսներ դնել։

Յեվ ալսպես առյօնն սկսեց ոգնել Ալբոլիտին յերեք որ և յերեք գիշեր. նա հոգ եր տանում հիվանդ կաղիկներին, իսկ հետո մատեցավ բժիշկ Ալբոլիտին և անհամարձակ ասաց։

— Վորդիս, վորին լես այնչափ սիրում եմ, հիվանդացել ե. Խնդրում եմ բարի յեղեք նրան ևս բուժելու։

— Լավ, ասաց բժիշկը, — լես հենց ալսոր կբուժեմձեր վորդուն։ Բժիշկն անմիջապես զնաց առյօնի վորդու մոտ և նրան մի այնպիսի դեղ տվեց, վոր հիվանդն անմիջապես առողջացավ։ Առյօնն ուրախացավ, բայց ամաչում եր Ֆի արդպիսի բարի բժշկի վիրավորելու համար։ Հետո ոնզեղջուրների և վագրերի վորդիներն ել հիվանդացն։ Ալբոլիտը նրանց ևս անմիջապես բուժեց։ Ոնզեղջուրներն ու վագրերն ասացին բժշկին։

— Մենք ամաչում ենք քեզ վիրավորելու համար։

— Վոչինչ, վոչինչ, — ասաց բժիշկը, մրուս անզամ ավելի խելոք կլինեք, իսկ հիմա յեկեք ինձ մոտ և ոգնեցեք ինձ կապիկներին բուժելու։





12

ՆՎԵՐԸ

Գաղաններն այնպես լավ ողնեցին բժշկին, վոր շատ շուտով
բոլոր հիվանդ կապիկներն առողջացան:

— Շնորհակալություն բժշկին, ասացին նրանք, նա բուժեց
մեզ սոսկալի հիվանդությունից, դրա փոխարեն մենք նրան մի
լավ նվեր պիտի տանք, Յեկեք նվիրենք նրան մի այնպիսի կեն-
դանի, վորին մարդիկ լերբեք չեն տեսել, վորի նմանը չլինի վոչ
կրկեսում, վոչ կենդանաբան ալգում և վոչ ել գաղանանոցում:

— Յեկեք նրան մի ուղտ նվիրենք, — բղավեց մի կապիկ:

— Վոչ, — ասաց Զիշին, — նրան ուղտ պետք չի, նա ուղտ շատ ե
տեսել, բոլոր մարդիկ ել ուղտ տեսել են:

— Արդ գեղքում ջալամ նվիրենք, — բղավեց մի ուրիշ կապիկ:

— Վո՛չ, ասաց Զիշին, — նա ջալամ ել ե տեսել:

— Իսկնա Տյանիտալկայ տեսել ե արդյոք, հարցրեց մի լերորդը:

— Վոչ, Տյանիտալկայ լերբեք չի տեսել, — պատասխանեց Զի-
շին, — և վո՛չ մի մարդ ել դեռ Տյանիտալկայ չի տեսել:

— Շատ լավ, մենք հիմա գիտենք, թե ինչ պետք ե նվիրենք
բժշկին:



13

ՏՅԱՆԻՏԱԼԿԱՅԸ

Մարդիկ Տյանիտալկայ լերբեք չեն տեսել, վորովհետև Տյանի-
տալկալը վախենում է մարդկանցից, և հենց վոր մարդ ե տեսնում,
անմիջապես թագնվում է թփերի տակ: Դուք ուրիշ գաղաններին
կարող եք վորսալ լերբ նրանք քնում են և փակում իրենց աշքերը,
դուք կմոտենաք նրանց հետերից և կրոնեք պոչից: Իսկ Տյանիտալ-
կալին գուք չեք կարող մոտենալ հետերից, վորովհետև Տյանիտալկալի
հետերի կողմումն ել գլուխ կառ Ալո՛, նա լերկու գլխանի իե, մեկը
առջելից, մյուսը հետերից: Յերբ նա քնել ե ուզում, առաջ քնեց-
նում ե մի գլուխը, իսկ հետո մյուս գլուխը: Նա լերբեք ամբող-
ջովին չի քնում: Մի գլուխը քնում ե, իսկ մյուս գլուխը շուրջն
ե դիտում, վորակեսզի վորսորդը գաղտնի չմոտենա իրեն. ահա թե
ինչն վոչ մի վորսորդի չի հաջողվել Տյանիտալկայ վորսալ:

թե ինչու վնչ մի կրկեսում, վո՞չ մի դազանանոցում, վո՞չ ել վորհե կենդանաբանական այգում ալդ կենդանուց չկա:

Կապիկները վորոշեցին բժիշկ Ալբոլիտի համար վորսալ մի Տյանիտալկալ: Նրանք մտան անտառի ամենախոր մասը, ուր բնակվում եր Տյանիտալկալը, և ասացին նրան:

— Մեր սիրելի Տյանիտալկալ չես ցանկանում արդուք բժիշկ Ալբոլիտի հետ մարդկանց լերկիրը դնար անտեղ լավ կինի քեզ համար:

Տյանիտալկալը թափահարեց դուրդ պլուխները և զուրդ բերանով պատասխանեց:

— Վո՞չ:

— Բժիշկը բարի լե, — ասացին կապիկները, նա քեզ կկերակրի մեղրաբլիթներով, իսկ լեթե դու հանկարծ հիվանդանաս, նա անմիջապես կրուժի քեզ:

— Մինուն ե, իես ցանկանում եմ ալստեղ մնար — պատասխանեց Տյանիտալկալը:

Կապիկները լերեք որ անընդհատ համոզում ելին նրան վերջապես Տյանիտալկալն ասաց.

— Յուլց տվեք ինձ ալդ բարի բժշկին, իես ուզում եմ տեսնել նրան:

Կապիկները Տյանիտալկալին տարան բժշկ Ալբոլիտի տնակը: Դուռը ծեծեցին:

— Մտեք, — ասաց բժշկը:

Զիշին հպարտությամբ ներս տարավ լերկոլիսանի կենդանուն:


— Այս ի՞նչ բան ե, — հարցրեց զարմացած բժշկը: Յես լերեք ալսպիսի հրաշք չեմ տեսեր:

— Սա Տյանիտալկալ լե, — պատասխանեց Զիշին: Նա ուզում է ծանոթանալ ձեզ հետ: Տյանիտալկալը աֆրիկան անտառների ամենազագագլուտ կենդանին ե. սա միակ կենդանին ե, վոր լերկու գլուխ ունի, սրան քեզ հետ մարդկանց լերկիրը տար:

— Իսկ նա ցանկանում ե արդուք ինձ հետ զալ:

— Քեզ մոտ սիրով կզամ, — ասաց Տյանիտալկալը, — իես անձիշապես նկատեցի, վոր դու սիրում ես կենդանիներին: Խոսք տուր միայն, վոր լեթե տիրեմ քեզ մոտ՝ ինձ հետ կուղարկես իմ հարազատ Աֆրիկան:

— Ինարկե հետ կուղարկեմ, — ասաց բժիշկը, — բայց ինձ մոտ դու այնպես լավ կզկաս քեզ, վոր հազիվ թե ցանկանաս հետ դալ:





14

ԿԱՊԻԿՆԵՐԸ ՀՐԱԺԵՇ ԵՆ ՏԱԼԻՍ ԲԺՇԿԻՆ

Կապիկները մտան բժշկի սենյակը և նրան ճաշի հրավիրեցին, չըաժեղափի առթիվ նրանք շքեղ հացերուլիթ ելին պատրաստել. մեղր, բանան, արմավ, ծիրան, լիմոն, անանաս և ընկույզ:

— Կեցցե՞ բժիշկ! Ալբուլիտ, — բացականչում ելին նրանք: — Նա աշխարհի ամենաբարի մարդն եւ: Գորիլլա մեծ կապիկը, վորն ուժեղ ձեռներ ուներ, վազեց անտառ և գուրս քաշեց անտեղից մի մեծ ծանր քար:

— Այս քարը, — ասաց նա, պետք եւ մնա հենց այնտեղ, վորտեղ բժիշկ Ալբուլիտը բուժեց կապիկների ցեղը. սա պետք եւ բժիշկ Ալբուլիտի հուշարձանը լինի:

Բժիշկը վերցրեց գլխարկը, խորը գլուխ տպեց կապիկներին և ասաց.

— Յտեսություն, թանկագին ընկերներ, շնորհակալություն

ձեր բուսն սիրո համար: Յես շուտով ելի կգամ ձեզ մոտ, իսկ մինչեւ իմ գալը, ձեզ մոտ եմ թողնում կոկորդիլոսին, թութակ կարուղուցին և կապիկ Զիջիդին: Նրանք Աֆրիկայումն են ծնվել թող Աֆրիկայումն ել մնան, Այստեղ են ապրում նրանց քույրերն ու իեղաւրները, ցանություններ:

Այս ասելով՝ բժիշկը ճանապարհ ընկավ, իսկ կապիկներն ուղարկեցին նրան: Ամեն մի կապիկ աշխատում եր ինչ կերպ եւ լինի սեղմել բժիշկ Ալբուլիտի ձեռքը, և քանի վոր կապիկները շատ ելին, մինչեւ ուշ գիշեր հերթով սեղմում ենին բժիշկ Ալբուլիտի ձեռքը, այնպես վոր բժշկի ձեռքը շատ սեղմելուց ցավեց:

Իսկ յերեկոյան մի օեծ դժբախտություն պատահեց:



րին և ասաց.

— Յտեսություն, թանկագին ընկերներ, շնորհակալություն



15

ՆՈՐ ՓՈՐՁԱՆՔ

Բժիշկը դեռ հազիվ եր գետն անցել, յերբ նորից ընկալ չար մարդակեր բարձակելի յերկիրը։ Սարսափելի յեր նրա համար անցնել սթին անտառով։

— Սո՞ւ, — փսխաց Բումբան, — խնդրում եմ կամաց խոսել։ Թե չե, մեղ ելի գերի կվերցնեն։

Այս խոսքերը դեռ չվերջացրած, հանկարծ ծառերի հետեւց դուրս պրծան բարձակելի ծառաները և հարձակվեցին խեղճ բժշկի վրա։ Նրանք վաղուց սպասում ելին բժշկին։

— Ըստ, գտնվեցին նրանք։ Վերջապես մենք քեզ բռնեցինք։ Հիմա մեր ձեռքից չես պրծնի։

Բժիշկը վախից դողում եր։ Ի՞նչ պիտի անի նա հիմա, ուր թագնվի անողոք թշնամիներից։ Հենց ալդ ժամանակ մոտ վագեց Տյանիտալկալը և ասաց։

— Նստիր անմիջապես ինձ վրա և ամուր բռնիր ինձ։ Ահա ացդպես։ Բժիշկը հենց վոր նստեց Տյանիտալկալի վրա, Տյանիտալկալն առաջ սլացավ ինչպես ամենաարագավազ ձին։ Բարձակելի ծառաներն ընկան նրա հետեւց։ Բայց քանի վոր Տյանիտալկալը յերկու գլուխ ուներ, հետեւ գլխով կծում և մոտ չեր թողնում վոչ վոքի։



Թշնամիները վախեցան յերկոլիսանի կենդանուց և հեռու փախան։ Տյանիտալկալը բժշկին հասցըրեց ծովափ, ուր կանգնել եր բարձակելի նավը։ Նա այնպես արագ եր վաղում, վոր նույնիսկ զազանները նրան համար չեցին կարողանում։

Տեսնելով նավը, բժիշկը շատ ուրախացավ։ Նավի վրա վոչ վոք չկար, բժիշկն իր գազաններով արագ տեղափորվեց նավում, առագաստը բարձրացըրեց և ուղում եր նավը թողնել բաց ծովում։ Նա հաղիվ եր մի քիչ հեռացել ափից, յերբ ափը վազեց բարձակելն ինքը։

— Կանգնիր, — բղավեց նա, ուր ես տաճում իմ նավը։ Վերագրձիր անմիջապես։



— Վո՞չ, — բղավեց բժիշկն ավազակին, — քեզ մոտ վերադառնալ չեմ ցանկանում: Դու այսպես դաժան ես և չար: Դու տանջեցիր իմ կենդանիներին: Դու ինձ բանտ նետեցիր: Դու ինձ սպանել եմիր ուղում: Այդ բոլորի փոխարեն յես վերցնում եմ քեզանից քո նավը, վորպեսզի մլուս անգամ ավելի խելոքանաս:

Բարձալելը սաստիկ բարկացավ, նա վազ եր տալիս ափով, բարձրաձայն հայուսում եր և մեծ մեծ քարեր շպրտում բժիշկ Ալբոլիտի հետեւից:

Բայց բժիշկ Ալբոլիտն արգեն հեռու յեր: Նա լողում եր Բարձալելի նավով ուղիղ դեպի իր լերկիրը, իսկ մի քանի որից հետո արգեն դուրս յեկավ իր լերկրի ափերը:

Ավան, Բումբան, Կիկան և Խոզուկ-մոզուկը տուն հասնելուն սաստիկ ուրախացան: Ծովափին նրանք տեսան նավաստի Ռոբինզոնին, վորը վաղուց սպասում եր նրանց:

— Վողջուն, նավաստի Ռոբինզոն, — բացականչեց բժիշկը:

— Ո՞ւր ե իմ նավը, հարցրեց նավաստի Ռոբինզոնը:

— Այս, — ասաց բժիշկը, — քո նավը խորտակվեց. նա Աֆրիկայի մոտ ժայռերի հանդիպելով՝ ջարդ ու փշուր եղավ. բայց յս քեզ համար մի նոր նավ եմ բերել, վորը քոնից ավելի լավն եւ:

— Հավ, — ասաց Ռոբինզոնը, քեզ վրա յես չեմ բարկանում. սա հրաշալի նավ ե. յես վազն և յեթ լողալով կանցնեմ իմ անբընակ կղզին:

Բժիշկը հրաժեշտ տվեց Ռոբինզոնին, հեծավ Տյանիտալկալին և քշեց քաղաքի փողոցներով ուղիղ դեպի տուն:

Յուրաքանչյուր փողոցում նրան դիմավորելու ելին վազուժ ճագարները, կատուները, շները, հորթերը, կովերը, ձիերը և բոլոր միասին բարձր բղավուժ ելին.


— Մալաչուկա, մալաչուկա:

Կենդանիների լեզվով այդ նշանակում ե «կեցցե բժիշկ Ալբոլիտը»:

Քաղաքի բոլոր ծալիքերից թոշուներ ելին գալիս, ճախրում բժշկի գլխավերնում և անուշ լերգեր ելին գեղղեղում նրա համար:

Բժիշկը տուն վերադառնալուն չափազանց ուրախ եր, նրա առանձնատենյակում առաջվա նման ապրում ելին ծեր ծին, կովը, չղջիկները և նապաստակները: Ակզբում, յերբ նրանք Տյանիտալկալին տեսան, վախեցան, բայց հետո ընտելացան և սիրեցին նրանք:

Տյանիտալկալը քիչ-էիչ դադարեց մարդկանցից վախենալուց:



յերբ նա զբոսնում եր փողոցում, նրա մոտ ելին վազում լերեխաները և խնդրում, վոր իրենց ման ածի. նա վոչ վոքի չեր մերժում: Անմիջապես ծունկի յեր իջնում, լերեխաները նստում ե ին նրա մեջքին և նա ման եր ածում նրանց թե՛ քաղաքում և թե՛ ծովափին, ուրախ թափահարելով իր զուրդ գլուխները: Զար Վառվառան այս տեսնելով, ուզեց ինքն ել հեծնի ու ման գա: Նա մազլցեց Տյանիտալկալի վրա և սկսեց հարվածել նրան հովանոցով:


— Դե, շուտ շարժվիր, լերկդիխանի եշ:

Տյանիտալկալը խխս բարկացավ, վազեց, բարձրացավ մի բարձր սարի վրա և Վառվառալին ծովը նետեց:

— Ոգնեցեք, փրկեցեք, — բղավուժ եր Վառվառան, բայց վոք չցանկացավ ոգնել նրան: Վառվառան սկսեց սուզվել:

— Ավգա, սիրելի Ավգա, ոգնիր ինձ ափ դուրս գամ, կանչեց նա, բայց Ավգան պատասխանեց.

Իսկ Ալբոլիտն իր փոքրիկ խըճիթում ապրում եր լերջանիկ և
վաղ առավոտից մինչ ուշ գիշեր բռնժում եր թռչուններին ու
կենդանիներին, վորոնքներա մոտ ելին գալիս աշխարհի բոլոր ծայ-
բերից:



— Մըսոռո՞ս, — կենդանիների լեզվով այդ նշանակում ե. —
Հեմ ուզում քեզ փրկեր, վորովհետեւ զու անպիտան ես ու չար:



Մոռերքում իր նավով լողում եր նավաստի Ռոբինզոնը. Նա
պարանը նետեց ծովը և Վառվառալին դորս քաշեց ծովից, Հենց
այդ ժամանակ ծովափին եր մոտենում Ալբոլիտն իր դադանների
հետ. Նա կանչեց հին նավաստի Ռոբինզոնին և ասաց.



— Հեռու տար նրան մեզանից, յես չեմ ուզում, վոր նա իմ
տանն ապրի ու ծեծի իմ կենդանիներին:

Հին նավաստի Ռոբինզոնը տարավ նրան հեռու, հեռու, ան-
քընակ կղղին, վորտեղ նա վոչ վոքի չեր կարող վիրավորել:

ՊԱՏՄՎԱԾՔ ՅԵՐԿՐՈՐԴ

ՊԵՆՏԱՆ ՅԵՎ ԾՈՎԱՐԵՆՆԵՐԸ





1

ՔԱՐԱՅՐԸ

Բժիշկ Ալբոլիտը շատ եր սիրում զբոսներ։ Ամեն յերեկո, աշ-
խատանքից հետո վերջնում եր հովանոցն ու իր կենդանիների հետ
զնում եր մի վորեն տեղ, կամ անտառ կամ դաշտ։ Նրա հետ եր լի-
նում նաև Տյանիտալկալը։ Առջենից վազում եր բաղիկ կիկան, հետե-
փից՝ շունը՝ Ավգան, և Խոզուկ-մոզուկը, իսկ ուսին թառած եր
լինում ծեր Բումբան։ Նրանք յերբեմն շատ հեռու ելին գնում, և
յերբ բժիշկ Ալբոլիտը հոգնում եր, հեծնում եր Տյանիտալկալին։

Մի անգամ զբոսնելիս ծովափին մի քարայր տեսան, ցանկացան ներս մտնել բայց քարայրը փակ եր, դռան վրա կողպեք եր կախած:

— Կուզելի իմանալ, թե ինչ կա այստեղ պահված, — ասաց Ավվան:

— Կարող ե պատահել, վոր այնտեղ մեղվարլիթներ լինեն պահված, — ասաց Տյանիտալկայր, վորն աշխարհում ամեն ինչից շատ մեղվարլիթներ եր սիրում:

— Վա՞չ, — ասաց Խոզուկ-մոզուկը, — այնտեղ ինձոր, շոկոլադ և կարկանդակներ կան:

— Պետք ե գտնել բանալին, — ասաց բժիշկը. գնացեք բանալին գտեք, բերեք:

Կենդանիները ցրվեցին և սկսեցին վորոնել քարայրի դռան բանալին. նրանք նաև ցին ամեն մի քարի տակ, ամեն մի թփի տակ, բայց բանալին վոչ մի տեղ չգտան, ապա հավաքվեցին դռան մոտ և ճեղքից սկսեցին ներս նաև ել. սակայն քարայրը մութն եր, վոշինչ տեսնել չկարողացան: Մեկ ել Բուժքան ասաց.

— Կոռթյուն, լոռություն, ինձ թվում ե թե քարայրում մի ինչ վոր կենդանի կա, վորը կամ մարդ ե կամ զազան:

Բոլորն սկսեցին ականջ դնել, բայց վոչինչ չլսեցին: Բժիշկ Այբոլիտն ասաց Բուժքալին:

— Ինձ թվում ե, վոր դու սխալվում ես. իս վոչինչ չեմ լսում:

— Չե մի, — ասաց Բուժքան, դու չես ել կարող լսել, ձեր բոլորի ականջները միասին վերցրած ավելի վատ են լսում քան, իմը՝ մենակ. Սաւս... Սուս... լսում եք, լսում եք:

— Վո՞չ, ասացին կենդանիները, — մենք վոչինչ չենք լսում:

— Իսկ ինս լսում եմ, — ասաց Բուժքան:


— Իսկ ի՞նչ ես լսում, — հարցրեց Այբոլիտը:


— Յես լսում եմ, թե ինչպես մի մարդ ձեռքերը գրպանը կոխեց:

— Այ քեզ հրաշք, — ասաց բժիշկը. — և յես չգիտելի, թե դու ալդպիսէ հրաշալի լսողություն ես ունեցել: Ապա մի ելի ականջ դիր և ասա՝ թե ինչ ես լսում:

— Յես լսում եմ, թե ինչպես ալդ մարդու ալտերով արցունքներ են հոսում:

— Արցունք, — բացականչեց բժիշկը, արցունք միթե այնուեղ, գուան հետևում ինչ վոր մեկը լալիս ե. ակետք ե ոգնել նրան, իս չեմ սիրում, յերբ արտասվում են. ինձ մի կային ավեք, իս ուզում եմ ջարդել այս դուռը:





2

ՊԵՆՏԱՆ

Տյանիտակալն անմիջապես տուն վազեց և մի սուր կացին բերեց: Բժիշկը վերցրեց կացինը, իր վողջ ուժով տարավ բերեց կացինը, ու տուր թե կտաս փակ դռանը:

Մեկ-յերկու, դուռը պոկվեց իր տեղից, և բժիշկը քարայր մտավ: Քարայրում մութն եր, բժիշկը լուցկին վառեց: Ախ, վորքան կեղատոտ ու ցուրտ եր քարայրը, վնչ սեղան կար, վնչ նստարան, վնչ աթոռ. հատակի վրա մի խուրձ ծղոտ կար միայն, իսկ ծղոտի վրա նստած եր մի փոքրիկ տղա և դառն արտասկում եր: Տեսնելով բժշկին իր բոլոր կենդանիներով, տղան սկսեց ավելի ուժեղ լաց լինել, բայց յերբ նկատեց, թե ինչպիսի բարի դեմք ունի բժիշկը, գաղարեց արտասկելուց ու ասաց.

— Ուրեմն դուք ծովահեն չեք:

— Վնչ, յես ծովահեն չեմ, — ասաց բժիշկը ծիծաղելով: Յես բժիշկ Աբովիտն եմ և վոչ թե ծովահեն, և միթե յես նման եմ ծովահենի:

— Վնչ, վնչ, — ասաց տղան, չնալած. վոր դուք կացին ել ունեք, մես չեմ վախենում ձեզանից: Բարե ձեզ, իմ անունը Պենտա յե: Չդիտեք արդիոք ուր և իմ հայրը:

— Չգիտեմ, — ասաց բժիշկը: — Իսկ ուր եր գնալու քո հայրը:

— Իմ հայրը ձկնորս ե, մենք յերկուսով ծով դուրս լեկանք՝ ձուկ վորսալու: Յես ու հայրս միասին ելինք, ձկնորսական նավակով: Հանկարծ մեզ վրա հարձակվեցին ծովահենները և մեզ գերի

վերցրին: Նրանք ուզում ելին, վոր հայրս ել ծովահեն դառնա, վոր պեսզի նավեր կողոպտի ու կործանի: Բայց հայրս ծովահեն դառնալ չեր ուզում: — Յես աղնիվ ձկնորս եմ և ավազակութամբ զբաղվեմ ուզում, — ասաց հայրս: Այդ ժամանակ ավազակները խիստ վել չեմ ուզում, իսկ առ բարեկացան, բռնեցին նրան և չգիտեմ թե ուր տարան: Իսկ ինձ բարկացան, բռնեցին նրան և չգիտեմ թե ուր տարան: Իսկ ինձ բարկացին այս քարայրում, մինչև հիմա յես հորս չեմ տեսել: Ուրե փակեցին այս քարայրում, մինչև հիմա յես հորս հետ, կարող ե պատահել, հայրս, ինչպես վարվեցին նրանք հորս հետ, կարող ե պատահել, վոր ծովին են նետել: Յեվ տղան նորից լաց լեղավ:

— Լաց մի լինի, — ասաց բժիշկը, ի՞նչ ոգուտ լացից, ավելի լավ

է մտածենք հորդ գտնելու մասին. ասա ինձ՝ ինչպիսի մարդ ենա:

— Շիկահեր ե, մորուքն ել շեկ ու շատ լերկար:

Բժիշկ Աբովիտն իր մոտ կանչեց կիկա բաղիկին և կամացուկ

ասաց ականջին:

— Զարի-բարի չափաչամ:

— Չուկ-չուկ, — պատասխանեց կիկան:

Կսելով այս խոսակցությունը, տղան ասաց.


— Ի՞նչ ծիծաղելի լեզվով եք խոսում, յես մի բառ անգամ

չհասկացա:

— Յես իմ կենդանիների հետ իրենց լեզվով եմ խոսում: Յես հասկանում եմ նրանց լեզուն, — ասաց բժիշկ Աբովիտը:

— Ի՞նչ ասացիք դուք ձեր բաղին:

— Յես ասացի նրան, վոր նա կանչի դելֆիններին:



3

ԴԵԼՖԻՆԵՐԸ

Բաղիկը ծովափ վազեց և բղավեց.
 — Դելֆիններ, դելֆիններ, այստեղ լեկեք, ձեղ բժիշկ Ալբումը կանչում ե:

Դելֆիններն անծիջապես ծովափ դուրս լեկան և հարցրին.
 — Բարե բժիշկ, ինչ ե պատահել,
 — Դժբախտություն ե պատահելք Յերեկ առավոտան ծովահենները հարձակվել են մի ձկնորսի վրա և, հավանական ե, ծովն են զցել լես վախենում եմ, վոր նա խեղդված լինի: Խնդրում եմ վորոնեցեք նրան, գուցե գտնեք նրան ծովի հատակում:
 — Իսկ ինչպիսի մարդ ե նա, — հարցրին դելֆինները:
 — Շիկահեր ե, — պատասխանեց բժիշկը, մորուքը նույնալեռ շիկահեր ե և շատ լերկար: Խնդրում եմ գտնեք նրան, նա ինձ շատ հարկավոր ե:
 — Լավ, — ասացին դելֆինները. — մենք ուրախ ենք՝ քեզ նման մի նշանավոր բժշկի ծառալելու համար: Մենք վողջ ծովը տակն ու վրա կանենք, կհարցնենք բոլոր խեցգետիններին ու ձկներին. Ինթե քո շիկահեր ձկնորսը խեղդված լինի, մենք անպայման կգըտնենք նրան և հենց վաղը կհալտնենք քեզ:

Դելֆինները սուզվեցին ծովի խորքերն ու սկսեցին վորոնել ձկնորսին: Նրանք տակն ու վրա արին վողջ ծովը լայնությամբ, յեր-

կարությամբ, նույնիսկ քարերի տակ նախցին, հարցրին բոլոր խեցգետիններին ու ձկներին, բայց վոչ մի տեղ խեղդված մարդ չգտան: Առավոտան կողմ նրանք ծովափ լողացին և ասացին բը-ժիշկ Ալբումը:


— Վոչ մի տեղ չգտանք քո ձկնորսին, վողջ զեշերը վորոնեցինք նրան: ուրեմն նա ծովի հատակում չե:

Դելֆինների խոսքերը լսելով, Պենտան շատ ուրախացավ:


— Ուրեմն իմ հայրը կենդանի լե, կենդանի լե, — բացականչեց նա ծափ տալով:

— Մենք անպայման կգտնենք քո հորը, — ասաց բժիշկը:

Ապա Կոստեցնելով նրան Տիանիտակալի վրա, լերկար ման ածեց ավագուտ ծովափին:



— Մենք նայեցինք վողջ լերկիրը, բայց վոչ մի տեղ չգտանք
քո ձկնորսին: իսկ յեթե մենք շտեսանք նրան, նշանակում ե, վոր
նա լերկը լերեսին չե:



ԱՐԾԻՎՆԵՐԸ

Պենտան ուրախ եր և լերջանիկ, բայց մեկ ել հառաջեց ու աըր-
առում հարցրեց.

— Իսկ ինչպես պիտի գտնեք դուք իս հորը:
Բժիշկն ասաց.

— Յես կկանչեմ արծիվներին. արծիվները թե սրատես են և
թե հեռատես. յերբ նրանք թռչում են անպերի վրալով, գետնի վրա
սողացող ամենափոքր միջատին անզամ տեսնում են, յես կիսնդրեմ
նրանց ստուգել վողջ լերկիրը. անտառները, դաշտերն ու լեռները,
վողջ քաղաքներն ու գյուղերը, թող ամեն տեղ վորոնեն քո հորը:

— Այդ լավ ե, ասաց Պենտան. դե, մի ուշացնիր, կանչիր արծիվ-
ներին:

Բժիշկը կանչեց արծիվներին, և արծիվներն յեկան:

— Թոեք աշխարհի չորս կողմերը, — ասաց բժիշկը, — և գտեք
շիկահեր ձկնորսին իր շիկահեր ու լերկար մորուքով:

— Լավ, — ասացին արծիվները. մենք քեզ նման մի նշանավոր
բժշկի համար կանենք, ինչ հնարավոր ե. կթոշենք բարձր, բարձր
և կնալենք վողջ լերկիրը, անտառները, դաշտերը, սարերը, վողջ
գյուղերը, և կաշխատենք գտնել ձկնորսին:

Ու նրանք թռան բարձր, բարձր՝ անտառների, դաշտերի, սարե-
րի վրալով: Յեկ ամեն մեկն ուշի ուշով դիտում եր, թե չի
լերեռում արդիոք շիկահեր ձկնորսն իր շիկահեր, լերկար մորուքով:

Հետեւալ որը նրանք բժշկի մոտ թռան և ասացին.



5

ԱՎՎԱՆ ՓՆՏՐՈՒՄ Ե ԶԿՆՈՐՍԻՆ

— Ի՞նչ պիտի անենք հիմա. — հարցրեց կիկան, ինչպես ել լինի, պետք ե ձկնորսին գտնել: Պենտան շատ կտիրի առանց հորը:

— Բայո! Ինչպես գտնել նրան, — հարցրեց Տյանիտալկաւը:

— Յեթե արծիվները չգտան, նշանակում ե վոչ վոք չի կարող գտնել:

— Իզուր եք այդպես մտածում, — բարկացած ասաց Ավվան: Ինարկե, արծիվները սրատես թոշուններ են, բայց մարդուն միայն շունը կարող ե գտնել: Յերբ դուք մարդ գտնելու կարիք ունենաք, դիմեցեք շանը, նա անպարհան կդանի Դրան:

— Ինչու իսու արծիվներին վիրավորում, — ասաց Խողուկ-մողուկը, դու կարծում ես հեշտ ե նրանց համար մեկ որում վողջ յերկիրը շրջել նախել բոլոր սարերը, անտառները և դաշտերը: Դու ահա պարապ նստել ես ախտել, իսկ նրանք չարչարվեցին, վորոնեցին:

— Ինչպես ես դու համարձակվում ինձ պարապ անվանել, բարկացավ Ավվան. . . իսկ դու զիտեմ արդիոք, իեթե իսու ցանկանամ վաղն և լեթ կդանեմ ձկնորսին:

— Զե, ցանկացիր, ցանկացիր, — ասաց Խողուկ-մողուկը և ծիծաղեց. դու վոչինչ ել չես կարող գտնել, դու միայն գոռողանում ես:

— Ինչպես, ուրեմն քո կարծիքով լսու գոռողանում եմ, — բարկացավ Ավվան: Լավ, հիմա կտեսնենք:

Ավվան ցատկից տեղից և վազեց բժիշկի մոտ:

— Բժիշկ, — ասաց նա, խնդրիր Պենտալին՝ ինձ ցուց տա մի այնպիսի իր, վորին կալել ե ձկնորսի ձեռքը:

— Ահա, — ասաց տղան և հանեց իր գրանից մեծ ու կարմիր թաշկինակը:

Շունը մոտեցավ թաշկինակին և սկսեց ագահորեն հոտ քաշել նրանից:

— Ծխախոտի և ձկան հոտ ե գալիս սրանից, — ասաց նա, — նրա հայրը ծխախոտ ե ծխել և հոլանդական լավ տեսակի ձուկ ե կերել: Ավելին ինձ պետք չե... Բժիշկ, ասա տղալին, վոր դեռ յերեք որ չանցած, իսու կդանեմ իր հորը, իսու կբարձրանամ վերև, այն բարձր սարի գագաթին և կհոտուեմ՝ թե ինչպիսի քամի լե հիմա:

— Բայց չե վոր հիմա մութ ե, ասաց բժիշկը, — ինչպես պիտի մթնում վորոնես:

— Վոչինչ, — ասաց շունը. բավական ե, վոր ինձ ծանոթ և ձկնորսի հոտը: Իսկ հոտուել լսու կարող եմ նաև մթնում:

Շունը բարձրացավ մի բարձր սարի վրա:

— Քամին ալսոր հոտուից ե փշում, — ասաց նա, հոտուենք տեսնենք, թե ինչ կասի քամին մեզ: Ձյուն... խոնավ մուշտակ... ելի մի խոնավ մուշտակ... գալլեր... գալլուկներ... խարուկի ծուխ... կեշի...

— Միթե դու իրոք քամու մի հոսանքում ալզքան հոտ ես զգում, — ասաց բժիշկը:

— Դե ինարկե, — ասաց Ավվան, — շները զարմանալի հոտառություն ունեն, ասեն մի պատահական շնիկ այնպիսի հոտ ե զգում, վոր չի զգա և վոչ մի մարդ:

Ցեղ շունը շարունակեց դարձլալ հոտուել ողը: Ցեղկար ժամանակ նա վոչինչ չեր ասում և վերջապես ասաց.

— Աղջուսներ... լերինջ... լերկաթե տանիք... փորքիկ ռռներ անտառում... ճանապարհ... փոշի... և...

— Մեղրաբլիթներ, — հարցրեց Տյանիտալկալը:

— Վաչ, — պատասխանեց Ավվան:

— Հնկուլդներ, — հարցրեց Կիկան.

— Վաչ, — պատասխանեց Ավվան:

— Խնձորներ, — հարցրեց Խոզու կ-մոզուկը:

— Վոչ ել խնձոր, — պատասխանեց Ավվան, վնչ ընկույզ ե, վնչ մեղրաբլիթ, վո՛, խնձոր, այլ բողբո՞ջ: Նշանակում ե ձկնորսը հյուսիսում շի, սպասենք մինչև քարին սկսի հարավից:


— Յես քեզ չեմ հավատում, — ասաց Խոզուկ-մոզուկը, այդ բորբ գու հնարում ես, վոչ մի հոտ ել չես առնում, այլ հիմարություններ են անում:


— Հանդիստ թող ինձ, ասում եմ քեզ, — բղավեց Ավվան, հակառակ դեպքում այնպես կկծեմ. քո պոշը, վոր...

— Լոեցնը, լոեցնք, դադարեցնք կովելուց, — ասաց բժիշկը, իս տեսնում եմ հիմա, իմ սիրելի Ավվան, վոր զու իրոք զարմանալի հոսառություն ունես, սպասենք մինչև փոխվի քամու հոսանքը:

Խոկ հիմա տուն գնալու ժամանակ ե, շտապեցնք: Պենտան դողում և արտասպում ե: Նա համ մըսում ե, համ ել սաստիկ քաղցած եւ Պետք եւ նրան կերակրել և քնացնել տաք անկողնում:

— Դե, Տյանիտալկալը, սոս բեր քո սեջքը: Պենտան, նստիք և ամառ բռնիը բաշից: Ավվան և Կիկան, իմ հետեւից, շնուա:





6

ԱՎՎԱՆ ՇԱՐՈՒՆԱԿՈՒՄ Ե ՎՈՐՈՆԵԼ ԶԿՆՈՐՍԻՆ


Հաջորդ որը վաղ առավոտան Ավվան սարը բարձրացավ և սկսեց քամին հոտոտել: Քամին փշում եր հարավից: Ավվան լերկար հոտոտեց և վերջապես ասաց:

— Թութակի, արծավենու, կապիկի, վարդերի, խաղողի և մողեսների հոտ և գալիս, իսկ ձկնորսի հոտ չկա:

— Ելի հոտոտիր, — ասաց Բումբան:

— Ընծուզտի, կրիայի, ջալլամի, տաք ավաղի, բուրգերի հոտ և բուրում: Իսկ ձկնորսի հոտ չի բուրում:

— Դու լերեք ել չես դտնի ձկնորսին, — ծաղրով ասաց Խողուկ-մողուկը, — և իզուր ելիր զոռոզանում:



Ավվան չպատասխանեց. միայն հաջորդ որը, վաղ առավոտան, նորից սարը բարձրացավ և մինչև ուշ զիշեր հոտոտեց ողը: Ուշ լերեկուան վաղեց բժշկի մոտ, վոր քնած եր Պենտալի հետ:


— Վեր կաց, վեր կաց, բղավեց Ավվան, — վեր կաց, ձկնորսին դաել եմ, զե արթնացիր, բավական ե քնես, տեսնմում ես, իս գտել եմ ձկնորսին, լես նրա հոտն առել եմ, այս, այս՝, քամին ծխախոտի և ձկան հոտ ե բերում:

Բժիշկն արթնացավ և վաղեց շան հետեւից:

— Ծովից հարավային քամի յե փչում, — բացականչեց շունը, և լես ձկնորսի հոտ եմ առնում: Նա ծովի մրուս ամուսնի և արագ, արագ, վաղենք այն ափը:

Ավվան ախալես բարձր եր հաջում, վոր բոլոր գաղանները վաղեցին գեղի բարձր սարը: Նրանց հետ նաև Պենտան:

— Արագ վաղիր նավաստի Ռոբինզոնի մոտ, — բղավեց Ավվան բժշկին, և խնդրիր, վոր նավը տա: Շտավլիր, քանի ուշ չե:



Բժիշկն անմիջապես վաղեց ծովափ, ուր կանգնած եր նավաստի Ռոբինզոնի նավը:

— Բարեվ, նավաստի Ռոբինզոն, — բացականչեց Բժիշկը: Յե-

զիր բարի, տուր ինձ քո նավը ինձ անհրաժեշտ և դարձլալ ժամկուրս գալ մի շատ կարեոր գործի հասար:

— Խնդրեմ, — ասաց նավաստի Ռորինզոնը, միայն զգաւշ կաց ծովահեններից: Ծովահենները սարսափելի չար մարդիկ են: Նրանք քեզ դերի կվերցնեն, իսկ իմ նավը կամ կալրեն կամ կխորտակեն:

Բայց բժիշկը շւսեց նավաստի Ռորինզոնի վերջին խոսքերը, նա-արագ թռավ նավի վրա, տեղափորեց այնտեղ Պենտային ու բոլոր գաղաններին և սլացավ բաց ծովով:

Ավվան տախտակամած վազեց և ասաց բժշկին:

— Զասկարա, զասկարա, քսու:

Շան լեզվով այդ նշանակում ե—նայիր քթիս, վոր կողմը վոր քիթս կուղղես, այն կողմն ել նավը քշիր: Բժիշկը բարձրացրեց առագաստը և նաման ավելի արագ առաջ սլացավ:

— Ավելի արագ, ավելի արագ,—բզմավում եր Ավվան:

Նավն առաջ եր թռչում ալիքների վրայով:

Դաղանները կանգնել ելին տախտակամածի վրա և նայում ելին թե չի լերեռում արդյոք ձկնորսը: Իսկ Պենտան չեր հավատում, թե իր հալրը կարող ե գտնվել: Նա նստել եր գլխիկոր և արտասվում եր: Վրա հասավ լերեկոն: Մթնեց: Բժիշկն ասաց շանը:

— Վհչ, Ավվա, — քեզ չհաջողվեց ձկնորսին գտնել: Ցավալի յե խեղճ Պենտալի վիճակը, բայց ինչ արած, պետք ե տուն վերադառնալ: Յեզ բժիշկն ուզում եր արդեն նավը լետ դարձնել, լերը բուժքա բուն, վոր նստած եր կալմի վրա և առաջ եր նայում, բղավեց.

— Ահա այնտեղ, հեռվում լես մի մեծ ժայռ եմ տեսնում:

— Շտապեցեք հասնել այնտեղ, — ասաց շունը: Ձկնորսն այնտեղ ե, ժայռի վրա: Յես առնում եմ նրա հոտը: Նա այնտեղ ե:

Շուտով բոլորը նկատեցին, վոր ծովից գուրս ե ցցվել մի ժայռ Բժիշկը նավն ուզեց դեպի ժայռը: Բայց ձկնորսը վոչ մի տեղ չեր լերեռում:


— Յես ալդաես ել գիտեցի, վոր Ավվան չի կարող գտնել ձըկնորսին, — ծաղրով ասաց Խոզուկ-մոզուկը: Զեօ հասկանում, թե բժիշկն ինչպես հավատաց մի արսպիսի խարեթալի:

Բժիշկը թռավ ժայռի վրա և սկսեց կանչել ձկնորսին:

— Առւ...

Վոչ վոք չարձագանքեց:

Միայն քամին եր աղմկում ջրերում և ալիքներն ելին գարնվում քարերին:





ԱՎՎԱՆ ԳՏԱՎ

Ձկնորսը ժայռի վրա չեր։ Ավվան նավից ցատկեց ժայռի վրա և սկսեց վազվագել հետ ու առաջ, հոտոտելով լուրաքանչյուր թուրի, Յել հանկարծ բարձր հաջեց։

— Կինել ե լե, հավ, հավ — շան լեզվով արդ նշանակում եր՝ այստեղ, բժիշկ, այստեղ, իմ հետեւից, Բժիշկը վազեց շան հետեւից։ Ժայռի դիմաց կար մի փոքրիկ կղզի։ Ավվան սլացավ դեպի կղզին։ Բժիշկը քաջ առ քաջ հետեւում եր նրան։ Ավվան կղզու վրա վազում եր հետ ու առաջ և հանկարծ ընկավ մի փոսի մեջ։ Փոռը մութն եր, Բժիշկն ի ավ փոսը և վառեց իր լապտերը։ Յեվ ինչ... փոսի մեջ, բաց գետնի վրա, պառկած եր մի ինչ զոր շիկահեր մարդ։ Սոսկալի նիհար և գունաւա։

Նա Պենտալի հալրն եր։

Բժիշկը բռնեց նրա ձեռքն ու ասաց.

— Վեր կացեք։ Դուք շատ պետք եք մեզ։

Մարդն սկզբում կարծեց, թե իր հետ ավազակ ե խոսում, սկսեց բարկացած հայոցներ, բայց յերբ տեսավ, թե ինչպիսի բարի դեմք ունի բժիշկը, — ասաց։

— Խնդրում եմ ինձ ուտելիք տաք, վաղուց ե ինչ վոչինչ չեմ կերել։

Բժիշկը նրան հաց ու պանիր տվեց։ Մարդը կերավ և վոտքի կանգնեց։

— Դուք ի՞նչպիս ընկար ալստեղ, — հարցրեց բժիշկը։

— Ինձ այստեղ գցեցին ավազակները։ Նրանք ինձ վոչ հաց ելին տալիս, վոչ ջուրը նրանք խլեցին ինձանից իմ տղալին և չգիտեմ՝ ուր տարան։ Զգիտեք արդյոք, մեր ե իմ տղան։

— Իսկ ի՞նչ ե ձեր տղայի անունը, — հարցրեց բժիշկը։

— Իմ տղայի անունը Պենտալի, — պատասխանեց ձկնորսը։

— Յեկեր իմ հետեւից, — ասաց բժիշկը և ովնեց ձկնորսին փոսից դուրս գալու։ Սովոր վազում եր նրա առջեվից։ Պենտան նավից տեսավ, զոր իր հալրը գալիս ե, վազեց նրան ընդառաջ։

— Գտնվեց, գտնվեց, ուռուա...

Բոլորը ծիծաղեցին և ուրախացան։ Բումբան և կիկան լերզեցին։

Փառք ու հարգանք

Յեկեք տանք

Մեր քաջ Ավվալին։

Միան Խողուկ-Խողուկը քաշվեց մի կողմ և տխուր հառաչեց։ Ներիր ինձ, Ավվա, քեզ վրա ծիծաղելուս համար, քեզ մեծախոս և խաբերա տսելուս համար։

— Դե լավ, — ասաց Ավվան։ Յես ներում եմ քեզ։ Բայց տես հա, յեթե մի անգամ ել վիրավորես ինձ, յես քո պոչը այնպես կկծեմ։ Վոր...

Բժիշկը շիկահեր ձկնորսին և տղալին նրանց գլուզը տարավ և տուն հասցրեց։

Յերբ նավը մոտեցավ ծովափին, բժիշկը նկատեց, զոր այնտեղ մի կին և կանգնած։ Նա Պենտալի մալրն եր, ձկնորսի կինը։ Քսան որ ու քսան գիշեր նստել եր նա ծովափին և նայել հեռուն, թե չի գալու արդյոք իր տղան, չի գալու արդյոք իր ամուսինը։

պղտի մնաք մեզ մոտ: Մենք ձուկ կվորսանք, կարկանդակներ կսատրաստենք, և Տյանիտալկային քաղցր մեղրաբլիթներ կտանք: —Յես մեծ սիրով մի որ ևս կմնալի, —ասաց Տյանիտալկալը ժպոտալով:

—Յես նույնպես, —վրա լեկավ Բումբան:

—Յես նույնպես, —բղավեց Կիկան:

—Այս լավ լեզավ, —ասաց բժիշկը. —ալդ դեղքում լիճարկե, լես ել կմնամ ձեզ մոտ հյուր:

Յեվ նա իր բոլոր գաղաններով հյուր մնաց ձկնորսի և նրա կնոջ մոտ:



Տեսնելով Պենտալին, առաջ վագեց, գրկեց նրան և սկսեց համբուրել: Նա մեկ համբուրուս եր Պենտալին, մեկ շիկահեր ձրէ-նորսին, մեկ բժշկին: Նա Ազգալից ալնքան դոհ եր, գոր քիչ եր մնում նրան ել համբուրեր: Բայց Ազգան թագնվեց թփերում և բարկացած ասաց.

—Ինչպիսի հիմարություն, համբուլըներ տանել չեմ կարող: Իսկ լեթե նա անպայման համբուրել ե ուզում, թող Խոզուկ-մոզուկին համբուրի:

Ավան արտաքուստ բարկացած եր ձեւացնում իրեն, բայց ինքն ել պակաս ուրախ չեր:

Յերեկուան բժիշկն ասաց.

—Դեն, մնաք բարով. Մեր տուն վերադառնալու ժամանակն եւ: —Վհչ, վհչ, —վեր թուավ ձկնորսի կինը. դուք մեր հյուրն եք և

Բալց պետք եր մեկնել:

Յտեսութեան,—ասաց բժիշկը ձկնորսին և նրա կնոջը, նստեց Տյանիտալկալի մեջքին և զնաց ծովափ, ուր նրան իր նավն եր ուղասում:

Վոկչ գլուղն ուղեկցում եր նրան:

Լավ կլիներ, լեթե մնալիր մեզ մոտ,—ասաց թզուկ Բամբուկոն: Հիմա ծովում ավաղակներ են վխտում: Նրանք կհարձակվեն քեզ վրա: և գերի կվերցնեն քեզ քո գաղանների հետ:

ԱՎՎԱՆ ՆՎԵՐ Ե ՍՄԱՆՈՒՄ

Բժիշկը Տյանիտալկալին նստած՝ զյուղ գնաց: Գլխավոր փողա-
ցով անցնելիս բոլորը խոնարիվում և բացականչում ելին.
—Կեցցե՛ բարի բժիշկը:

Հրապարակում նրան դիմավորեցին աշակերտները և մի հրա-
շալի ծաղկեփունջ նվիրեցին: Հանկարծ մի թզուկ լեկավ՝ մորուքը
մինչև գետին, խոնարիվեց բժիշկին ու ասաց.

—Յես ցանկանում եմ Ավվալին տեսնել:

Թզուկի անունը Բամբուկո լեր: Նա այդ գլուղի ամենալուրջ
մարդն եր: Բոլորը սիրում ելին նրան և գախենում ելին նրանից:

Ավվան թափահարելով պոչը, մոտեցավ նրան: Բամբուկոն գըր-
պանից հանեց մի արծաթե վզնոց.

—Ավվան, —ասաց նա հանդիսավոր կերպով: Մեր գլուղացիները
նվիրում են քեզ այս հրաշալի վզնոցը՝ ավաղակների կողմից հափշ-
տակած ձկնորսին գտնելուդ համար:

Ավվան թափահարեց պոչն ու ասաց, — չակա:

Շան լիղփով այդ նշանակում եր «Չնորհակալություն»:

Բոլորն սկսեցին զննել վզնոցը, վորի վրա մեծ-մեծ տառե-
րով գրված եր. «Ավվալին—ամենախելոք և ամենաքաջ շանը»:

Յերեք որ Պենտալի ծնողները հուրասիրեցին Այրոլիտին: Ժամանակն անցնում եր ուրախ և աննկատելի: Տյանիտալկալը առա-
վոտից մինչև գիշեր անուշ մեղրաբլիթներ եր ուտում: Պենտան
ջութակ եր նվազում, իսկ Խոզուկ-մոզուկն ու Բումբան պարում
ելին:



Յես ավաղակներից չեմ վախենում, — պատասխանեց բժիշկը:
Իմ նավը ճեպընթաց եւ, Յես կբարձրացնեմ առագաստը. իսկ ավա-
ղակները մեզ չեն կարող հասնել: Այս խոսքերով բժիշկը հեռացավ
ափից: Ծովափին լեղած բոլոր մարդիկ թափահարում ելին թաշկի-
նակները և բղավում—ուսամ...



9

ԱՎԱԶԱԿՆԵՐԸ

Նամակ արագ առաջ եր սլանում: Յերրորդ որը ուղեվորները հեռվում մի ինչ զոր անապատախն կղզի տեսան, վորի վրա չելին յերեսում վոչ ծառեր, վոչ կենդանիներ և վոչ ել մարդիկ: Միայն անտառ կար ու մեկ ել՝ առելի ժայռեր: Բայց այնտեղ, այդ ժայռերի հետեւմ թագնվել ելին սարսափելի ավազակներ: Յերբ մի վորեւ նամ եր անցկենում և կղզու մոտով, նրանք հարձակվում ելին նամի վրա, կողոպտում և կոտորում ելին մարդկանց, իսկ նավերը խորտակում: Նրանք բժշկի վրա շատ ելին բարկացել՝ Պենտախն և շիկահեր ձկնորսին համիշտակելու համար և վաղուց ե՞ ինչ դարան մտած՝ սպասում ելին նրան:

Նրանք մի հոկանամ ունելին թագցրած բարձր ժայռերի լեռնում:

Իսկ բժիշկը վոչ ավազակներին եր նկատում, վոչ եր նամը: Նա տախտակամածի ուրա դրսնում եր իր կենդանիների հետ: Յեղանակը հրաշալի յեր: Արեւ պայծառ լուսավորում եր շրջապատը: Բժիշկն իրեն շատ յերջանիկ եր զգում:

Հանկարծ Առօռեկ-մողուկն ասաց:

— Մի նախեցք, ան ի՞նչ նամ ե այնտեղ:

Բժիշկն ուշագրութիւնը նախեց և տեսավ, վոր կղզու հետևից իրենց ե մոտենում մի սե նամ սե առազատներով:

— Այս առազատներն ինձ դուր չեն դալիս, — առաց Խողուկը, և ինչու նրանք սպիտակ չեն, ալ սե Միայն ավազակների նավերի առազատներն են սե լինում:

Խողուկ-մողուկը ճիշտ գուշակեց, սե առազատներով առաջ ելին սլանում ավազակները: Նրանք ուղում ելին հասնել բժիշկ Այրոլիտին և իրենց վրեժն առնել Պենտախն և շիկահեր ձկնորսին ազատելու համար:

— Արագ, արագ, — բղավում եր բժիշկը, արձակեցեց բոլոր առազատները, յես չեմ ուղում, վոր ավազակները հասնեն մեզ: Այնինչ ավազակները քանի զնում մոտենում ելին:

— Նրանք հասնում են մեզ, — բղավեց Ավվան, — նրանք մոտ են մեզ, յես տեսնում եմ նրանց դեմքը, ի՞նչ սարսափելի բեխեր ունեն ի՞նչ պիտի անենք, ուր պիտի փախչենք: Նրանք հիմա կհարձակվեն մեզ վրա, կկապկապտեն և ծովը կնետեն:

Բժիշկը վեր նախեց և տեսավ, վոր վերևից մի ծիծեռնակ ե թաշում:

— Ծիծեռնակ, ծիծեռնակ, մեզ վրա յեն դալիս ավազակները, կիմա մեզ նրանք կկապկապտեն և ծովը կնետեն:

Ծիծեռնակն իշավ նրանց մոտ:

— Նասի քթից պարան կապիր, յես դնամ կոռւնկներին կանչեմ դան, — ասաց ծիծեռնակը:

Մի բոպե չանցած կոռւնկներն յեկան:



— Մի տրտմիր, բժիշկ Այրոլիտ, — ասացին նրանք. մենք բոկուն կազատենք:

Բժիշկը պարանը կապեց նավի քթից, կոռոնկները բռնեցին պարանից և նամաւ արագ լողաց:

Կոռոնկները շատ ելին, նրանք շատ արագ ելին քաշում նավը: Նամաւ առաջ եր թոշում նետի պես, բժիշկը նույնիսկ բռնեց իր գլխարկը, վոր ծովը չընկնի:

Ալբոլիտի կենդանիները հետ նայեցին և տեսան, վոր ավազակների նավը շատ յետ և մնացել:

— Ենորհակու ենք ձեզանից, կոռոնկներ, — ասաց բժիշկը: Դուք փրկեցիք մեզ ավազակներից: Յեթե դուք չլինելիք, մենք հիմա պառկած կլինելինք ծովի հատակում:



10

ԻՆՉՈ՞Ի ՓԱԽԱՆՄԿՆԵՐԸ

Կոռոնկների համար այնքան ել հեշտ չեր քաշել ծանր նավը: Մի քանի ժամից հետո նրանք այնպես հողնեցին, վոր քիչ մնաց ծովը թափվելին: Այդ ժամանակ նրանք նավը մոտեցրին մի ինչ վոր ափի, հրաժեշտ ավին բժշկին և դնացին իրենց հարազատ ճահիճը: Բժիշկը նրանց հետեւից լիբրկար ժամանակ թափարում եր իր թաշկինակը:

Հանկարծ բժիշկը նկատեց, վոր իր նավի բոլոր նըբանցքներից փախչում են մկները և ափ են իջնում:

Ավվան նկատելով միներին նրանց հետեւց ընկավ:

— Ավվա, Ավվա, ես զարձիր, չնամարձակվեա:

Ավվան մեծ ցանկություն ուներ շաղլիկ միներին վորսալու, բայց ի՞նչ արած, պետք եր լենթարկվել բժշկի հրամանին. նա շաբաց պոչը և բժշկից վիրավորված մի կողմ քաշվեց:

Մեկ ել բժշկին մոռեցավ մի ծեր մուկ և ասաց.

— Ծորհակալություն բժիշկի վոր գումեզ աղատեցիր ալդ արլունարբու շան հարձակումից, ալդ լավության փոխարեն լեռ քեզ մի զաղանիք կհարանեմ. այսոր քո նավը պիտի խորապուզվի: Այս, լերկու ժամ շանցած քո նավը ծովի հատակում կլինի:



Բժիշկը գուրգ ձեռներով բանեց գլուխը:

— Այդ գու վորտեղից գիտես, — հարցրեց նա մկանը:

— Ոչ թե գորտեղից, — պատասխանեց մուկը. — մենք ասլրում ենք ներքենում, ստորին նավախորշում, և լերը նավի հատակին թեկուզ և ամենափոքը ճեղք բացվի, գորով ջուրն սկսի նավը լցվել մենք բոլորից շուտ ենք ալդ ճեղքը նկատում: Յերեկ լերեկոյան, լերը իմ բունն ելի վերադառնում, տեսա, վոր բունս լցվել ե ջրով, — զեհ, մտածում եմ, ուրեմն պետք է փախչել, զադն այս նավը կընկղմի:

— Փախիր և գու, քանի զեռ ուշ շե...

Այո՛, այո՛ բղավեց բժիշկը, մենք հենց հիմա պիտի փախչենք նավից, հակառակ զեպքում կընկղմվենք: Գաղաններ, իմ հետեւց, արագ, արագ:



Նա հավաքեց նավի վրալից իր իրերը և շտապ ափ տեղափոխվեց, նրա հետ միասին նաև զաղանները:

Նրանք լերկար ժամանակ քալլում ելին ավազու ծովափով: Վերջապես սաստիկ հոգնեցին:

— Նստենք հանգստանալու և մտածենք, թե ի՞նչ ենք անելու:

— Միթե մենք մեր վոզջ կանքի ընթացքում պիտի ալստեղ մընանք, — ասաց Տանիտարկալ և արտապեց:

Ենք բոլոր զաղանները արտասկեցին նրա հետ, վորովհետեւ քոլորն եւ ուզում ելին շուտ տուն վերադառնալ:

Հաւկարծ վրա հասավ ծիծեռնակը.


— Բժիշկ, բժիշկ, — կանչեց նա, մեծ դժբախտություն և պատահեր: Քո նավի վրա լեն հավաքվել ավաղակները: Բժիշկը վուրք ցատկեց:

— Իսկ ինչ են անում իմ նավի վրա, — հարցը բժիշկը: Հա
— Նրանք կողոպտել են ուզում քո նավը, — պատասխանեց
ծիծեռնակը, վազիր և հեռացրու նրանց անտեղից:

— Վաչ, — ասաց բժիշկը յերջանիկ ժպիտով: Կարիք չկա նրանց
հեռացնելու, թող լողան իմ նավով: Ավելի լավ ե շտապ գնանք և
նրանց նավը վերցնենք: Դեհ արագ, վազենք և վերցնենք ա-
վազակների նավը:

Յեկ բժիշկը թռավ գեղի ափ, նրա հետեւից Տյանիսալկալը՝ և
մլուս գաղանները: Ահա և ավազակների նավը: Վոչ վոք չկա նրա-
վրա, բոլոր ավազակները Ալբուխտի նավի վրա յեն գտնվում:

— Լուցեք, լոեցեք, մի աղմկեք, — ասում եր բժիշկն իր գա-
զաններին, — անաղմուկ տեղավորվեցեք ավազակների նավի վրա,
այնպես վոր վոչ վոք չնկատի:



11

ԴԺԲԱԽՏՈՒԹՅՈՒՆ ԴԺԲԱԽՏՈՒԹՅԱՆ ՀԵՏԵՎԼԻՑ:

Գաղանները կանացուկ բարձրացան նավի վրա, [անաղմուկ
բարձրացրին առագաստը և սկսեցին անձայն առաջ լողալ: Ավա-
զակները վոչինչ չնկատեցին: Հանկարծ մի մեծ դժբախտություն
պատահեց: Բանն այն եր, վոր Խոզուկ-մոզուկը մրսել և հարբուխ
գր ընկեր: Յեկ հենց այն ժամանակ, յերբ բժիշկն աշխատում եր
անաղմուկ անցկացնել նավն ավազակների մոտով, Խոզուկ-մոզուկը
քարձր փոշտաց — մեկ, յերկու, յերեք: Ավազակները լոեցին, վոր

ինչ վոր մեկը փոշտում եր, անմիջապես տախտակամած դռւրս լեռան և տեսան, թե ինչպես բժիշկը հափշտակել երենց նավը՝
— կանգնիր, կանգնիր,— գոռազին և ընկան նրանց հետեվից՝
բժիշկը բաց արեց առագաստները: Ահա, ուր վոր ե ավազակները
կհասնեն իրենց: Բայց նավը թոշում ե անվերջ առաջ: Մի քիչ
ել, և ահա ավազակների նավն ավելի լիտ կմնա:

— Ուռան, մենք փրկված ենք, բղավեց բժիշկը:

Հենց այդ ժամանակ օխ ծեր ավազակ վերցրեց փշտովն ու կրա-
կեց, Գնդակը ծակեց Տյանիտալկայի կուրծքը: Խեղճ Տյանիտալկայը
լերեց և ընկափ ծովը:

— Բժիշկ, բժիշկ, ովնեցնք, խեղդվում եմ:

— Յես ուրախությամբ կողնելի քեզ, — ասաց բժիշկը, սա-
կալն իեթե իս կանգնեցնեմ իմ նավը, մեզ խկույն կրոնեն ավա-
զակները:

— Ախր իս խեղդվում եմ, խեղդվում եմ, — բղավում եր Տյանի-
տալկայը ջրից:


Ի՞նչ արած: Բժիշկն իջեցրեց առագաստը, կանգնեցրեց նավը
և ծով նետեց պարանը: Տյանիտալկայն ատամներով բռնեց պարա-
նից, բժիշկն խկույն նրան տախտակամած հանեց: Կապեց նրա-
վերը և նորից ճանապարհ ընկան: Բայց արդեն ուշ եր Ավա-
զակներն առաջ ելին սլանում բոլոր առագաստներով:

— Վերջապես կրոնենք մենք քեզ և քո գաղաններին, բղա-
վում եին նրանք: Այնտեղ նավիդ կայի վրա թառել ե քո փա-
ռահեղ բախտը, շուտով մենք նրան կտապակենք, հա... հա... նա մեղ
համար համեղ ուտելիք կլինի: Քո խոզուկին ել մենք կտապակենք
զաղուց և ինչ խոզի միս շենք կերել: հենց այս լերկու որս մենք
խոզի մսից կատլետներ կունինանք, հա... հա... հա... իսկ քեզ,
անպիտան բժիշկ, կկապկապենք պարանով ու ծովը կնետենք, վոր
դու կերակուր դառնաս աղան շնաձկներին:

Խոզուկ-մոզուկը լսելով այս խոսքերը, դառն արտասվեց:

— Եժսախտ եմ յես, դժբախտ, — ասում եր նա, — յես չեմ ցան-
կանում, վոր ավազակներն ինձ տապակեն և ուտեն:
Ազգան նույնպիս յայիս եր: Նա ցավում եր բժշկի համար:
— Յես չեմ ուզում, վոր նրան շնաձկները կուլ տան:





ԲԺԻՇԿԸ ՓՐԿՎԵԼ Ե

Միայն Բումբա բռն չեր վախենում ավաղակներից: Նա հանգիստ ասում եր Խոզուկ-մոզուկին և Ավվալին.

— Հիմար եք դուք, հիմար: Ինչու յեք վախենում: Միթե դուք չգիտեք, վոր այն նավը, վորի վրա գտնվում են ավաղակները, շուտով խորտակելու լե: Հիշեցեք, թե ինչ ասաց մուկը: Նա ասաց, վոր ախոր նավն անպայման կխորտակվի: Նավի հատակին մի մեծ ճեղքածք ե առաջացել, և նավը լցվել է ջրով: Նավի հետ կխորտակվեն նաև ավաղակները: Ել ինչից եք վախենում: Ավաղակները կխեղպվեն, իսկ մենք կմնանք անվասս ու անվտանգ:

Բայց Խոզուկ-մոզուկը շարունակում եր լաց լինել:

Մինչ խեղպվեն ավաղակները, նրանք կտապակնեն և ինձ, և կի կալին, — ասում եր նա:

Մինչ ալդ ավաղակներն ավելի ու ավելի ելին մոտենում: Նավի տախտակամածի վրա կանգնել եր ավաղակապետը, վորին թենալիս ելին ասում: Նա թափահարում եր սուրն ու գոռում:

— Եյ, դու կապիկների բժիշկ, քիչ կյանք ունես կապիկներին բուժելու: Շուտով մենք քեզ ձկների ու խեցգետինների աշխարհը կուղարկենք, բայց տես հա, այնպես արա, վոր ճանապարհին շնաձկները քեզ չխժուեն:

Բժիշկը պատասխանեց նրանց.

— Զգուշացիր թենալիս, վոր շնաձկները քեզ չխժուեն, քեզ: Քո նավում ջրի հոսանք ե սկսվել, և շուտով դուք ծովի հատակում կլինեք:

— Սառն ես, — բղավեց թենալիսը: Յեթե իմ նավն ընկղմելու լիներ, մկները վագուց արդեն փախած կլինելին:

— Մկները փախել են արդեն, իսկ դու շուտով ծովի հատակում կլինես քո ավաղակների հետ:

Հենց ալդ ժամանակ ավաղակները նկատեցին, վոր իրենց նավը ծանրանում ե ու ցած իջնում: Նրանք դեպի տախտակամած վագեցին, բղավեցին և լաց լեղան.


«Ոզնեցեք... մենք խեղդվում ենք»...

Բայց վոչ վոք չուզեց ոգնել նրանց: Նավը գնալով ընկղմվում էր ջրի մեջ: Շուտով ավաղակները ծովը թափեցին: Նրանք խլվում ելին ջրի մեջ և անընդհատ գոռում:

— Ոզնեցեք, ոգնեցեք, — խեղդվում ենք:

Թենալիսը լողալով մոտեցավ բժիշկի նավին և ուզեց պարանը բռնելով տախտակամած դուրս դալ, բայց Ավգան ցուց տվեց իր ատամներն ու ասաց — մը՝ ոռու: Թենալիսը վախից ցնցվեց և գլխիվայր ջրի մեջ շուռ լեկավ:

— Ոզնեցեք, վրկեցեք, — բղավում եր նա, դուրս քաշեցեք ինձ Ջրից:



ՇԱՋԿՆԵՐԸ

Հանկարծ ծովի լեռեսին շնաձկներ չերեացին, հսկայական վիթխարի ձկներ սուր ատամներով, լայն ու բաց բերանով։ Ավազակները սաստիկ վախեցան, լեռը տեսան, վոր շնաձկները դեպի իրենց են գալիս. բայց շնաձկներն անցան նրանց մոտով։ Ամենասեծ շնաձուկը ուղիղ գնաց բժշկի մոտ. զուրս ցցեց օֆիթը ջրից ու հարցրեց։

— Ասացեք ինդրեմ, դուք չե՞ք արդուք նշանավոր բժիշկ Ալբոլիտը, վորը գաղաններին ու թոշուններին ե բուժում։

— Այս, — պատասխանեց բժիշկը, — ինձ Ալբոլիտ են առում։

— Շատ հարգելի լե, — ասաց շնաձուկը։ Ուրախ եմ ձեզ տեսնելուս համար։ Մենք ձեր մասին լավ բաներ շատ ենք լսել։ Իսկ սպաքեր են ձեր նավի շուրջը լողացող ալդ մարդիկ։

Ավազակներ են — ասաց բժիշկը. — Նրանք ուղում ելին խեղդել ինձ և ուտել իմ ընկերներին։

Ո՞, — ասաց շնաձուկը — չելի՞ք ցանկանա արդիոք, վոր մենք կուր

ավազինք ալդ դաժան ավազակներին։ Մի խոսք ասացեք և մենք նրանց հաշիվը կմաքրենք։

— Այո՛, թող ապրեն իրենց համար, — ասաց բժիշկը, բայց և անպես հարկավոր ե նրանց պատժել, լեղեք բարի, ինձ մոտ բերեք ավազակապետ Բենալիսին։

Շատ լավ, — պատասխանեց շնաձուկը, ապա լողաց դեպի Բենալիսը, բռնեց նրա վառքից և քարշ տվեց նրան նավի մոտ։

Այ թե ինչ, Բենալիս, — առաց բժիշկն ավազակին, — դու շատ վաս մարդ ես։ Դու նավին ես կործանելու թալանել. դու նավատիներ ես ողանել։ Հարկավոր ե ինձ մի խոսք ասել և քեզ կուլ կտա շնաձուկը։ Այդ վաս չեր լինի ինարկե։ Բայց մեղքս ես գալիս... Խոսք տուր ինձ, վոր զու կվերափոխվես, նոր մարդ կդառնաս, և յես կտամ շնաձկներին, վոր քեզ կուլ չտան։

— Իսկ ինչ պիտի անեմ լիս, — հարցրեց Բենալիսը, վախով նաւելով շնաձկին, վորն արդեն բերանը բացեր, պատրաստվել եր նրան կուլ տալու։

Դադարիր դողանալուց և կողոպտելուց, — ասաց բժիշկը, դադարիր նավեր կործանելուց։ Դադարիր մարդկանց սպանելուց։ Յեզ լծիր մի աշխատանքի։ Աշխատիր։

— Իսկ ինչպիսի աշխատանքի լծիւմ, — հարցրեց Բենալիսը, լիս վոշինչ չեմ սովորել լիս մենակ կողոպտել գիտեմ։

— Ծովափի գնա, — ասաց նրան բժիշկը, — և ծովափին մի լավ արդի մշակիր։ Թող քո ալգում աճեն խնձորներ, տանձեր, բանաններ, կոկոսան ընկուլղներ, վիունիկան արմավենիներ, սեխեր, խաղող և ձմերուկ, վորպեսզի ծովափի լեկող աճեն մի նավաստի կարողանա և հանգստանալ, և ուտել, և լսել թոշունների լերդը։

Բենալիսը դունատվեց և մուալլից։

— Ուրեմն ինչ, դու ուզում ես, վոր լինչ վոր մի բռնտանչ՝ գառնամ։

— Այո՛, — պատասխանեց բժիշկը. հազար անգամ լավ ե բռնտանչի լինել, քան թե գող ու ավազակ։ Դե՛ռ, շուտ պատասխանիր, աշխատանքով զբաղվել ուղղում ես, թե չե։


— Վո՞չ, չեմ ցանկանում ինչ վոր սեխերի ու ձմերուկների նետ քաշ, — պատասխանեց Բենալիսը, բայց լերը նայեց շնաձկան հսկայական սուր ատամներին՝ կամաց ասաց.

— Համաձայն եմ... ալո, ալո... լավ... համաձայն եմ:


— Լավ հիշիր, — ասաց նրան բժիշկը, և թե դու թեկուղ մի մարդ ես թալանել կամ սպանել, յես խոկուլն կիմանամ, գորով հետեւ ամեն որ ինձ մոտ են դալիս դեղձան իկները, նրանք կպատճեն ինձ քո չարագործությունների մաւին:


Հետո, բժիշկը դարձավ ջնաձկան:

— Ծնորհակալութիւն ձեզ, սիրելի բարեկամներ, ձեր հավատարին ծառայութիւն համար, միայն խնդրում եմ անգնաս թողնեք այս ավագակներին: Թող իրենց համար, ծովափ գնան, վերափոխվեն և նոր ու ազնիվ մարդիկ դառնան:



Սկազակները ծովափ գնաէ ին և խկուլն լծվելին աշխատանքի, իսկ բժիշկը բարձրացրեց առագաստը և շարժվեց բաց ծովով: Նավի վրա բալորն ուրախ ելին սարսափելի ավագակներից փրկվելու հաւաք:





14

ՀԻՆ ԲԱՐԵԿԱՄՆԵՐԸ

Նրանք լողում ելին լերկար ժամանակ և մի քանի որից հետո
լսեցին, վոր մեկը ձայն եւ տալիս.

— Բեռն, բեռն, բարակես բավեն:

Կենդանիների լեզվով այդ նշանակում եր — բժիշկ, բժիշկ
կանգնեցրու քո նավը:


Բժիշկն իջեցրեց տապատար, նավը կանգ տուավ, բոլորը տե-
սան թութակ կարուղուին: Նու արադ թոշում եր ծովի վրայով:

— Կարուղո, ոլոր դժու լես, — բացականչեց բժիշկը, — ինչպես
ուրախ եմ քեզ ահմանելուս հաճար: Թոքիր, լեկ ալստեղ:

Կարուղոն թռավ նավի վրա, թառեց ամենաբարձր կայսին և
առաջ:



— Ե՞ս նալիք, տես՝ ով եւ լողում իմ հետեւից:
Բժիշկը նալեց ծովին և տեսավ, վոր լող եւ տալիս կոկորդիլոսը,
իսկ նրա մեջքին նատել եւ կապիկ Զիշին: Նա թափահարում եր
ձեռքի արմաւեռու ճյուղը և ծիծաղում:

Բժիշկն անմիջապես նավն ուղղեց նրանց կողմը, վոր դիմավորի
կոկորդիլոսին և Զիշին: Յեվ ցած նետեց պարանը նավից: Նրանք
պարանի միջոցով տախտակամած մազլցեցին, վրա հասան ու սկսե-
ցին համբուրել բժշկի շրթերը, այտերը, մորուքը և աշքերը:



— Այս վճնց լուս ընկաք ծովի մեջտեղում, — հարցրեց նրանց
բժիշկը: Նա չափազանց ուրախ եր իր հին բարեկամներին հան-
դիպելու համար:

— Այս, բժիշկ, — ասաց Կոկորդիլոսը, Մեղ համար Աֆրիկայում
այնքան տիսուր եր առանց քեզ: Տիսուր եր առանց Կիկաչի, առանց
Ավգալի, առանց Բումբալի, առանց մեր սիրելի Խոզուկ-մողուկի:
Մենք շատ եինք ցանկանում վերադառնալ քեզ մոտ տուն, վոր-
տեղ պահարանում ճագարներ են ապրում, բազմոցի վրա ապրում
ե վոզնին, իսկ զզրոցում՝ մայր նապաստակն իր ճուտերով: Մենք
վորոշեցինք թողնել մեր Աֆրիկան, կտրել — անցնել բոլոր ծովերն
ու ովկանները, հասնել այն քաղաքը, վորտեղ դու լես, և ապրել
քեզ հետ մինչև մեր կանքի վերջը:



— Ուսամ ա, — բացականչեց բժիշկը:

— Ուսամ ա, — բացականչեց Բումբան:

— Ուսամ, — բացականչեցին բոլոր գաղանները, ապա ձեռք
ձեռքի բոնելով, — սկսեցին պարել կալմերի շուրջը:

Ձեռք-ձեռքի — ձեռք-ձեռքի,

Հել ջան, եց ջան, ձեռք-ձեռքի,

Մեր հարազատ Ալբոլիտին

Մենք լերեք չենք լքի:

Միայն Զիչին եր մի կողմ քաշվել մենակ և տիսուր հառաչում
եր:

— Քեզ ինչ ե պատահեր — հարցրեց Տյանիտակալը:

— Ա՛խ, յես հիշեցի շաբ Վառվառապին, նա եղի պիտի մեղ զիրավորի ու տանջիս:

— Մի վախենա, — ասաց Տյանիտալկալը, — մեր տանն ել Վառվառա չկա: Յես նրան ծովը գցեցի, և հիմա նա ապրում ե մի անձարդաբնակ կղզում:

— Անմարդաբնակ կղզ մում:


— Այո:

Բոլորն ուրախացան, և Զիշին, և Կոկորդիլոսը, և Կարուդոն, վոր Վառվառան հեռու յե, անմարդաբնակ կղզում:

— Կեցցե Տյանիտալկալը, — բացականչեցին նրանք և նորից սկսեցին պարել:

Տաշի, տաշի, մա տաշի,
Կապիկ Զիշին պարբաշի,
Կորչի են չար Վառվառան,
Միրտը յեռ քար Վառվառան:

Տյանիտալկալն ուրախթափահարում եր զույգ գլուխներն ու յերջանիկ ժալտում զույգ յերեսով:



ՎԵՐԶԱԲԱՆ

ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ

Սրանից մի քանի տարի առաջ մի տարորինակ կեզք պատահեց. աշխարհի յերկու ծալքերում գտնվող յերկու գրողներ միաժամանակ միևնույն մարդու մասին սկսեցին միևնույն հեքիաթը գրել:

Գրողներից մեկն ապրում եր ովկիանոսի մրւս ափում՝ Ամերիկայում, իսկ մյուսը՝ մեղ մոտ ԽՍՀՄ-ում՝ Լենինգրադում: Մեկը կոչվում եր Գրու Լոֆտինգ, մյուսը՝ Չուկովսկի: Մեկը մյուսին վոչ տեսել եր, վոչ ել դիտեր, և նույնիսկ իրար գոլության մասին գաղափար չունեցին: Գրողներից մեկը գրել եր ոռուերեն լեզվով, մյուսն անգլերեն. մեկը՝ չափածո, մյուսը՝ արծակ, բայց և այնպես հեքիաթներն իրար չափազանց նման ելին դուրս յեկել, գորովհետև յերկուսի մոտ ել նույն հերոսն եր— մի բարի բժիշկ, վորը բուժում և գաղաններին:

Չուկովսկին իր հերոսի անունը Ալբոլիտ եր գրել իսկ Գ. Լոֆտինգը՝ Դուլիտե: Սակայն թե Ալբոլիտը և թե՛ Դուլիտլեն ըստ ելության, նույն մարդն են: Չուկովսկու հեքիաթը բժիշկ Ալբոլիտի մասին («Բարձալել» և «Լիմպոմպո») քաջ ծանոթ ե խորհրդագլուխ յերկրներին: Իսկ Գ. Լոֆտինգի հեքիաթը բժ. Դուլիտլելի մասին, գրեթե ծանոթ չե նրանց: Յեկ Չուկովսկին վորոշել և վերապատճել այն խորհրդագլուխ յերեխաններին: Բայց Չուկովսկին վերապատճել ե այն յուրահատուկ ձևով՝ այսինքն բժիշկ Դուլիտլելին անվանել ե բժիշկ Ալբոլիտ և ավելացրել ե իրենից մի քանի այնպիսի արկածներ, վորպիսիք չկան Գ. Լոֆտինգի գրքում: Նա նույնիսկ այդ հեքիաթում ե մտցրել իր Բարձալելին:



Պատ. Խմբաշիք՝ Մ. Գուրղալյան
Տեխ. խմբ. Ան Գասպարյան
Սըմազրիչ Մ. Փարսադանյան
Կոնտրոլ Սըմազրիչ Վ. Սվագյան

Քլավիոնի լիազու կ-4675. Հրատ. 4933

Պատվիր 1241. Տիրաժ 6000.

Թուղթ 72×105 Տպ. $61\frac{1}{2}$ մամուլ

Մել մամ. 39360 նիշ. Հեղինակային $61\frac{1}{4}$ մամ.

Հանձնված և արտադրության 23 գեկտ. 1937 թ.

Սառազրկված և տպագրության 28 հունվ. 1938 թ.

Գինը 2 առեք. Կազմը 1 ս. 50 լուղ.

Պհաճառի տուարան, Յեղեգան, Լենինի փող. 65.

ՀՀ Ազգային գրադարան



NL0398397

125

4618

ԳԻՆԸ 2 Ր.
ԿԱԶՄԸ 1 Ր. 5^ր 4.

КОРНЕЙ ЧУКОВСКИЙ
ДОКТОР АЙБОЛИТ
Гиз Арм. ССР. Հայաստան